

Մ.Ս.Կ. ԼՈՒՍԺՈՂԿՈՄԱՑ
ՅԵՐԱԿԱՆ ՅԵՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՎՍՐՉՈՒԹՅՈՒՆ

ԾՐԱԳՐԱՅԻՆ
ՄԵԹՈԴԱԿԱՆ
ՆՅՈՒԹԵՐ

1934-35 ՌԻՍՈՒՄ. ՏԱՐՎԱ
ՅԵՐԿՐՈՐԴ ՔԱՌՈՐԴԻ
ՌԻՍՈՒՑՉԱԿԱՆ
ԿՈՆՖԵՐԱՆՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ

375
ժ-98

ԲԱԴՈՒ — 1934

• - MAR 2010

375
8-98

ԱՍՆԷ ԼՈՒՍՅՈՂԿՈՄՍՏ
ՏԱՐՐԱԿԱՆ ՅԵՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ЦЕНТР. ГОС. БИБЛИОТЕКА ТООР
И Н В. № 821 3

372.3 ✓

ԾՐԱԳՐԱՅԻՆ-ՄԵԹՈԴԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ
1934-35 ՈՒՍՈՒՄ. ՏԱՐՎԱ
ՖԵՐԿՐՈՐԴ ՔԱՌՈՐԴԻ
Կ ՈՆՖԵՐԱՆՍՆԵՐԻ ՀԱՄԱՐ



ԲԱԳՈՒ — 1934

6 MAY 2013

53.681



43538.63

ՅԵՐԿՐՈՐԴ ՔԱՌՈՐԳԻ ՄԱՍԻՆ

Խորհրդային պոլիտեխնիկական դպրոցները մի քանի ուրիշ հետո մտնում են ուսումնական տարվա ամենապատասխանատու մի շրջանը. առաջին քառորդը վերջացնելով սկսում են անցնել յերկրորդ քառորդի ծրագրային նյութերը:

Յերկրորդ քառորդի նյութերն անցնելիս, ուսուցչին ոգնելու նպատակով, բոլոր առարկաներից տրվում են, ինչպես առաջին քառորդի սկզբին, ծրագրային նյութի բաշխումն ու յուրաքանչյուր առարկայից մի քանի դասի կոնսպեկտ: Ծրագրային նյութերի բաշխումը կատարելիս, դպրոցներն առաջին քառորդի նյութերն լրությամբ անցնելու հարցն աչքի առաջ ունենալով, ուսումնական տարին 15 որ ուշ սկսելու հետևանքով՝ առաջին քառորդից մնացած նյութերի մի մասը յերկրորդ քառորդ ենք տեղափոխել: Ծրագրային նյութերը չաբալթների բաժանելով տրված է յուրաքանչյուր չաբալթում ծրագրից անցնելիք նյութի մոտոչ մասը: Նյութերը չաբալթների բաշխումը մոտավոր լինելով հանդերձ՝ տվյալ քառորդի ամբողջ նյութերը 71/2 չաբալթում անցնելը պարտադիր է:

«Ուսուցչին ոգնության» հանդեսն այս համարից սկսած տարիս է առանձին - առանձին նյութերի համար դասի կոնսպեկտներ: Կոնսպեկտներն յերկրորդ քառորդի ծրագրային նյութի պահանակարևոր և մոտոչ գծավարությունն ունեցող մոմենտներին են վերաբերում: Այս որինակելի կոնսպեկտների նպատակն է՝ ցույց տալով ամեն մի դասի պլանավորումը, ոգնել ուսուցչին՝ իր ամենորյա դասերը պատրաստելու գործում: Որական դասի պլանն չունեցող ուսուցիչը դասարան չպիտի մտնի: Դասը պլանավորելը դիտելիքներն հարստացնելու և մասնազխտությունը բարձրացնելու գործում ամենակարևոր միջոցներից մեկն է:

Առաջին քառորդի նյութերն ուսումնական տարվա սկզբում ուսուցչին մեթոդական կոնֆերանսներում մշակելով՝ ուսուցիչներին համար պարզ չեղող մի շարք խնդիրներ են պարզվել: Յերկրորդ քառորդի սկզբում նյութերը, դպրոցներին հասնելուն պես, ուսուցիչն այս նյութերի հիման վրա պիտի կազմի ար-

տաղբակահան պլանները, զբարոցի դիրեկտորը, վարիչը և ուսուցչը կողմից ստուգման յենթարկելուց հետո մեթոդական միացութիւններում պիտի քննվի և հաստատվի: Երջանի առանձին առանձին կետերում հրատարակելիք մեթոդական միացութիւններն անարտադատ մինչև այս տարվա նոյեմբերի մեկը զատերին չզուգադիպող որերից մեկում պիտի վերջացնեն աշխատանքները:

Երջանային լուսբաժինները մեթոդիստ հրահանգիչներին, տեխնիկումի դասատուներին, ցուցադրական զբարոցներին, դասատուներին և ուրիշ պատրաստված դասատուներին պիտի ամբողջին այս մեթոդական միացութիւններին:

Յերկրորդ քառորդն սկսելու հետ միասին ամեն մի զբարոց պետք է առաջին քառորդի հանրագումարն անի: Այդ հանրագումարը միայն դիրեկտորի կամ վարիչի կողմից ձևակառուրեն կատարելուց խուսափելով, զբարոցի մանկավարժական կոլեկտիվը պետք է լայն ձևով դնի այդ խնդիրը, և նրա արդյունքները շքշանային լուսբաժին ուղարկելու հետ միասին միաժամանակ պիտի ուղարկի Լուսժողովմաստի զբարոցական վարչութիւն:

Նրա հետ միասին յուրաքանչյուր լուսբաժնի լուսբաժնավարի անձնակազմի պատասխանատուութիւնը, չըջանի մասշտաբով առաջին քառորդի աշխատանքների հանրագումարը կատարելով, այս տարվա նոյեմբերի 15-ից ուշ չլինելու պահանջով պիտի ներկայացնի Լուսժողովմաստի զբարոցական վարչութիւն: Այդ հանրագումարներում ցույց տրված պիտի լինեն առաջին քառորդում բոլոր առարկաների նյութերն աշակերտները կողմից յուրացրած լինելու աստիճանը, գծավարութիւնները, ոժանդակ միջոցները և ուսումնական պիտույքները ոգտագործման, ուսուցիչները դասի պատրաստվելուն, զբարոցի կարգապահութիւն և նորմալ աշխատանքին արդելք հանդիսացող պատճառները:

Պիտի արձանագրել, վր ձևական և ընդհանուր ֆրազներով գրված հաշվետուութիւնները զբարոցի ձիւտ պատկերը չտալով հանդերձ, ցույց են տալիս զբարոցի աշխատակիցների կոնկրետ դեկլարատիւնները բացակայութիւնը: Տրվող տեղեկութիւնները պետք է հիմնված լինեն կոնկրետ փաստերով և թվերով:

Զբարոցներում լեզվի, մաթեմատիկայի, պատմութիւն և աշխարհագրութիւնի դասերի ժամանակ հանդիպող մի շարք թերութիւններն ու գծավարութիւնները վերացնելու գործում ուսուցիչներին աջակցելու համար «Ուսուցչին ոգնութիւն» հանդեսի մեծ մասը նվիրվում է այդ առարկաների վերաբերյալ մեթոդական ցուցմունքներին: Առաջին դասարանում գրագիտութիւն սովորեցնելը գիտութիւնները յուրացնելու համար մեծ նշանա-

Ֆրութիւն ունենալը կասկածից դուրս է. միաժամանակ զբարոցի սովորեցնելու մեթոդական ձիւտ կարգապահութիւնն ու գրագիտութիւնը բոլորին հայտնի յի:

Առաջին քառորդը հանրագումարի բերելիս առաջին դասարանի ուսուցիչներին ձեռք բերած արդյունքների, դասի մեթոդական կատուցվածքի նկատմամբ հանդիպած անհաջողութիւններն ու սխալներն յերևան բերելով պիտի քննութիւն անել և ուղղել: Բարձր դասարաններում կարողալ գրելու թուլութիւնն ու անդադարութիւնը վերացնելը զբարոցների առաջ կանգնած ամենագիտապետ խնդիրներից մեկն է: Գրագիտութիւնը ուղղելու ձևերը ճշտելը գրագիտութիւն սովորեցնելու կարևոր մի հարց է: «Ուսուցչին ոգնութիւն» հանդեսի 4-րդ համարում (5-րդ դասարանի համար) գրագիտութիւնն ուղղելու մասին ընդ. Քյաղիմ Զաղեյի գրած հոդվածն ուսուցիչներին մեծ ոգնութիւն է ցույց տալու (տարբարների հանցանքով հոգնածը լուս է տեսել առանց վերնագրի, հանդեսի 5-րդ համարում այդ մասին ուղղում տրված է): Մի շարք վոչ լրիվ և լրիվ միջնակարգ զբարոցները աշակերտները, մանուկանոց առանձին առանձին ուսուցիչներ իրենց մտքերը գրագետ կերպով արտահայտել չկարողանալով հանդերձ, նրանց գրածներն ուղղադրական սխալներով լրիք լինելը գաղտնիք չէ: Այդ իսկ պատճառով գեղեցիկ և մաքուր գրելը, սխալներն ուղղելը զբարոցի առաջ կանգնած ամենակարևոր մի խնդիրներից մեկն է:

Մաթեմատիկայից մեթոդական նյութեր գետնելով հանդեսի մեջ, նկատի յի առնված ուսուցիչներին յուր շախատանքը նրանց վրա: Տարբարական և միջնակարգ զբարոցներում ուսուցիչներին խնդիրները լուծելու վերաբերյալ մեթոդական գիտելիքների մեջ շատ թուլ լինելն ակնհայտ է: Աշակերտները խնդիրները լուծելու մեջ դեռ յետ են մնում: Պրոֆեսոր Ամոսովի հոդվածն հանդեսի այս համարում անկասկած մեծ ոգնութիւնն է ցույց տալու:

Աշխարհագրութիւնն ու պատմութիւնն սովորելիս, Համկոմկուսի (բ) Կենտկոմի և Ժողովրդի վրոշումների մեջ նշված թերութիւնները լրիվին վերացնելու խնդիրը զբարոցի և յուսագրութիւնն ուղղման արդանքների առաջ կանգնած արարտականութիւնն է:

Աշխարհագրութիւն և պատմութիւնն դասատուներն աշխատելով անցյալ տարի հրատարակված դասագրքերով, կրկնակի պատասխանատուութիւնն են կրում: Այդ առթիւ զբարոցական վարչութիւնը մի շարք միջոցառումներ յի ձեռնարկում (ու-

սուցչական կուրս — կոնֆերանսների ժողովածուներում, հանդեսի զանազան համարներում աշխարհագրութային և պատմութային դասավանդման վերաբերյալ հոդվածներ և ուրիշ ցուցմունքներ և տեսչույթներ)։ Յիշխման աշխարհագրութային քարտեզը դրսևրոցահաններին լավ յուրացնել տարուն լուրջ ուշադրութուն պիտի դարձնել։ Ստուգման ժամանակ յերեկաց, մեր աշխարհագրութային դասատուներից շատերը շատ քիչ են ծանոթ քարտեզին։ այս բացը վերջնականապես պիտի վերացնել։ Քարտեզի միտ աշխատելու վերաբերյալ պրոֆեսոր Բարանսկու հոդվածը, տպված հանդեսի հինգերորդ համարում, անկասկած ուսուցչիչներին պիտի ոգևորի։

Այս ուսումնական տարում դպրոցներն ավելի ճիշտ և կանոնավոր կերպով կոմպլեկտավորելու հետևանքով, շատ դպրոցներում (տարրական) մի ուսուցչի միաժամանակ յերկու դասարանի հետ պարապելու գործում Պետք է համոզվել ՆՍՀՄ մյուս հանրապետութայինների մեջ միաժամանակ յերկու և ավելի դասարանի հետ պարապելու բավական մեծ փորձ կա։ Իսկ Ամերիկայում և Անգլիայում միաժամանակ 3-4 դասարանի հետ մի ուսուցիչ է պարապում։

Յերկու դասարանը մի ուսուցչի ձեռքին, միաժամանակութային կարգով, պետք է համարել նորմալ։ Բայց պետք է արձանագրել, մեր քիչ պատրաստութուն ունեցող դասատուների համար այս աշխատանքը շատ դժվար է։ Մինչև այժմ այդ առթիվ մեզ մոտ պետք չեղած չափով չի մշակված այդ խնդիրը։ «Ուսուցչին ոգնութուն» հանդեսում, վեցերորդ համարից ըսկսած, միաժամանակ յերկու դասարանի հետ պարապելու վերաբերյալ մեթոդական ցուցմունքներ են զետեղվում։

Այն ուսուցչիները, մորոնք միաժամանակ յերկու դասարանի հետ են պարապում, նաև դպրոցի վարիչները, մորոնք դասարան ունեն, վեցերորդ համարում այդ մասին զետեղված հոդվածը վերլուծելով տեղի ունեցած սխալները պիտի ուղղեն։

Յերկուրորդ քառորդն սկսելով դպրոցները մանուկ են ուսում նսկան տարվա ամենապատասխանատու մի շրջան։ Ընկ. ընկ. զիրեկտորները, վարիչները և ուսուցչիները արված ամբողջ մատերիալները լայն կերպով ոգտագործելով, ուսումնական տարվա առաջին կեսի վերջում կայանալիք հունվարյան կոնֆերանսներին պիտի դան կարևոր նվաճումներով ապահովված։

Յ. ՀԱԶԻՅԵՎ

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՅԵՎ ԳՐԱԿՍՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՆՅՈՒԹԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄԸ 1934-35 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐԻ

ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆ

Յերկուրդ քառորդ

ԱՌԱՋԻՆ ՇԱԲԱԹ. — Լոգունդների կոլեկտիվ արտասանութային մշակում (1 ժամ)։ Պարզ և մատչելի բառերից կազմած համառոտ նախադասութայինների անհատական և վոլլեկտիվ ընթերցում (1 ժամ)։ Յուրացնել տալ զեղարվեստական յերկու մատչելի փորձիկ կտոր (2 ժամ)։ Համառոտ նախադասութայինների և փորձիկ հատվածների զխտակցական արտագրութային (1½ ժամ)։ Վորոշել փորձիկ հոդվածի մասերը (նախադասութային) (1 ժամ)։ Դասադրելից հոդվածների և վոտանավորների ընթերցում (5½ ժամ)։

ՅԵՐԿՐՈՐԴ ՇԱԲԱԹ. — Վոտանավորի կոլեկտիվ արտասանութային մշակում (1 ժամ)։ Վոտանավորի մեջ յեղող արտասանութային և գրութային տարբերվող բառերի տեսողական և մոտորական յուրացում (մարդ, վարդ, աղջիկ և այլն) (½ ժամ)։ Մանկական նկարների տակ գրածի ընթերցում և արտագրութային (½ ժամ)։ Գրել ծանոթ նկարի բովանդակութայինը (ո՞վ ի՞նչ է անում) — (1 ժամ)։ Ընթերցում դասադրելից (6 ժամ)։ Կանոնավոր համառոտ նախադասութային վերլուծում հարցերով (առանց տերմինների), ոգտագործելով աշակերտի կանոնավոր պատասխանը (1 ժամ)։ Գիտակցական արտագրութային (2 ժամ)։

ՅԵՐՐՈՐԴ ՇԱԲԱԹ. — Վոտանավորի կոլեկտիվ արտասանութային մշակում (1 ժամ)։ Լոգունդների կոլլեկտիվ արտասան-

նություն (1 ժամ) : Ուսուցչի կողմից գրատախտակի վրա գրածի ընթերցում (1 ժամ) : Դասագրքից ընթերցում (6 ժամ) : Գիտակցական արտադրութիւն (2 ժամ) : Համառոտ նախադասութիւններ վերածել բառերի, վանկերի, տառերի և հնչյունների (1 ժ.) :

ՉՈՐՐՈՐԴ ՇԱԲԱԹ. — Յուրացնել տալ գեղարվեստական յերկու կտոր (2 ժամ) : Այդ գեղարվեստական կտորից գրատախտակի վրա ուսուցչի գրածի ընթերցումն ու նրա արտադրութիւնը (1 ժամ) : Դասագրքից ընթերցում և առաջնորդող հարցերի ոգնութեամբ բովանդակութեան վերարտադրութիւն (7 ժամ) : Գիտակցական արտադրութիւն (1 ժամ) : Համառոտ նախադասութիւնը վերածել բառերի, վանկերի, տառերի և հնչյունների (1 ժամ) :

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՇԱԲԱԹ. — Ուսուցչի ոգնութեամբ կազմած լրդունդների անհատական և կոլեկտիվ արտասանութիւն (1½ ժամ) : Գրատախտակի վրա գրած լրդունդների ընթերցում և արտադրութիւն (1 ժամ) : Պատմել նկարի բովանդակութիւնը (ն^օվ ի^օնչ է անում) — (2 ժամ) : Ուսուցչի հարցերի ոգնութեամբ գրել նույն նկարի բովանդակութիւնը (½ ժամ) : Դասագրքից ընթերցում և բովանդակութեան վերարտադրութիւն (6 ժամ) : Լրացնել նախադասութեան մեջ բաց թողած բառերը (առարկայի և գործողութեան) (1 ժամ) :

ՎՅՅԵՐՈՐԴ ՇԱԲԱԹ. — Յուրացնել տալ գեղարվեստական արձակ գրվածքի (հոդվածի) մի կտոր (1 ժամ) : Այդ կտորի ղժվար բառերի և արտասանութեամբ ու գրութեամբ տարբերովող բառերի ուղղագրութիւնը գրատախտակից (½ ժամ) : Նույն գեղարվեստական կտորի արտադրութիւնը գրատախտակից՝ փորպէս գիտակցական արտադրութիւն (1 ժամ) : Ընթերցում դասագրքից և բովանդակութեան վերարտադրութիւն (7 ժամ) : Կազմել պարզ նախադասութիւններ (1 ժամ) : Հարցերով վերլուծել նախադասութիւնը (1 ժամ) :

ՅՈՐՐՈՐԴ ՇԱԲԱԹ. — Պատմել դիտածի մասին (ի^օնչ է տեսել և ի^օնչն է հետաքրքրել իրեն) — (1 ժամ) : Ընթերցում և հոդվածի ինքնուրույն, առանց ուսուցչի ոգնութեան վերարտադրելը (6 ժամ) : Ստուգող թերադրութիւն յերկրորդ քառորդում սովորած լեզվական գիտելիքների վերաբերյալ (ղժվար բառեր, ուղղագրութեամբ ու արտասանութեամբ տարբերվող բառեր) (1 ժամ) : Կազմել կանոնավոր պարզ նախադասութիւններ (1 ժամ) : Ուսուցչի հարցերին գրավոր պատասխանելու վարժութիւն (3 ժամ) :

ՈՒԹԵՐՈՐԴ (ԿԵՍ) ՇԱԲԱԹ. — Յերկրորդ քառորդի ամփոփում (բանավոր խոսքի, ընթերցանութիւն, գրավոր խոսքի և քերականութիւն ու ուղղագրութիւն) :

Շաբաթուրթյակ. — Վերահիշյալ բոլոր շաբաթներում առանձին ուշադրութիւն պիտի դարձնել բարբառից գրական լեզվին անցնելու և վարչապարտիւթյան վրա :

Գեղարվեստական կտորներն անդիւր անել տարուց առաջ բացատրված, յուրացված պիտի լինին, թե այս և թե հետեւյալ դասարաններում :

ՅԵՐԿՐՈՐԴ ԳԱՍՐԱՆ

ՅԵՐԿՐՈՐԴ ԲԱՐՈՂ

ԱՌԱՋԻՆ ՇԱԲԱԹ. — Անդիւր անել տալ մի կարճ վոտանավոր (1 ժամ), ուշադրութիւն դարձնելով յերեխաների վոնի պակասավոր կողմերն ուղղելուն : Գրատախտակից կարգալ անդիւր արած վոտանավորի մասերը (½ ժամ) : Գրել նրա մեջ յեղող ղժվար բառերն ու ղարձմածքները (½ ժամ) : Արտահայտիչ ընթերցանութեան վարժութիւններ՝ ուսուցչի որինակով (1 ժամ) : Կազմել պարզ ընդարձակ նախադասութիւններ՝ հարցերի ոգնութեամբ (1 ժամ) և գրել տետրում, միաժամանակ հետեւիւն վարչապարտիւթյան : Դասագրքի հոդվածների ընթերցում և քննարկում (7 ժամ) :

ՅԵՐԿՐՈՐԴ ՇԱԲԱԹ. — Անդիւր արած վոտանավորի կոլեկտիվ և անհատական արտասանութիւն (½ ժամ) : Պատմել նրկարների բովանդակութիւնը՝ կանոնավոր և շաղկապված ձեկարների բովանդակութիւնը՝ ուսուցչի ոգնութեամբ (1½ ժամ) : Իր ընկերների ձեռագիր տեքստը կարգալու վարժութիւն (½ ժամ) : Դասագրքի հոդվածների և վոտանավորների ընթերցում և քննարկում (6 ժամ) : Վորոչիւն փոքրիկ հոդվածի մասերը (նախադասութիւնները)՝ ուշադրութիւն դարձնելով կետադրութեան և ղժվար գրվող բառերի ուղղագրութեան վրա (1 ժամ) : Վերլուծել պարզ ընդարձակ նախադասութիւններ՝ հարցերով (առանց տեքստի) : Վորոչիւն գլխավոր անդամները (խոսքը ու կամ վնչի^օ մասին և ի^օնչ է ասվում նրա մասին) — (1 ժ.) :

ՅԵՐՐՈՐԴ ՇԱԲԱԹ. — Անդիւր անել տալ գեղարվեստական արձակ մի փոքրիկ կտոր (1 ժամ) : Սովորեցնել նրա մեջ յեղող ղժվար բառերի ուղղագրութիւնը (½ ժամ) : Արտահայտիչ ըն-

Թերցանության վարժություններ՝ սուսուցչի սրինակով (1 ժամ): Կազմել լողուններ և արտասանել ($\frac{1}{2}$ ժամ): Դասադրքը՝ քի հոգվածների և վոտանավորների ընթերցում ու քննարկում (6 ժամ): Հարցական և բացականչական նշանների գործածություններ, մեծատառի գործածությունը հատուկ անուններէ մեջ, իսկ միջակետի, ստորակետի, բութի, չափերտի և դծի անունները (2 ժամ):

ՉՈՐՐՈՐԴ ՇԱԲԱԹ. — Անգիր արած գեղարվեստական կրտսրի կորեկտիվ արտասանություն ($\frac{1}{2}$ ժամ): Կատակցված սրտումել նկարի բովանդակությունը ($\frac{1}{2}$ ժամ). նույնը գրել ու սուցչի ոգնությամբ, ուշադրություն դարձնելով բարձրագույնների ուղղադրության և առողջանության սովորած նշանների գործածության վրա ($\frac{1}{2}$ ժամ): Արտահայտիչ ընթերցանության վարժություն (1 ժամ): Կազմել ու գրի առնել լողուններ ($\frac{1}{2}$ ժամ): Դասադրքի հոգվածների և վոտանավորների ընթերցում և քննարկում (6 ժամ): Լրացնել բաց թողած բառերը նախադասության մեջ (բուն լրացուցիչ և վորոշիչներ) — (1 ժամ): Հարցերի ոգնությամբ փոխել բառերի ձեւը (հորուման վարժություն) նախադասության մեջ (1 ժամ):

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՇԱԲԱԹ. — Պատմել տալ տեսածն ու դիտածը (եր մաքերը ուրիշին հաղորդելու վարժություններ) — 1 ժամ: Պատմելիս սխալ գործածած բառերի ու ձևերի ուղղադրությունը գրատախտակից, բացատրելով համադատասխան կանոնները ($\frac{1}{2}$ ժամ): Սովորած հոգվածի ինտցենիրովկան (1 ժամ): Մանոթ նյութի գիտակցական արտադրությունը գրելից ($\frac{1}{2}$ ժամ): Դասադրքի հոգվածների և վոտանավորների ընթերցում ու քննարկում (6 ժամ): Նախադասության վերլուծումը հարցերի ոգնությամբ, առանց տերմինների (1 ժամ): Բառերը վանկերի բաժանելն ու սողադարձի պարզ կանոնները (1 ժամ):

ՎԵՑԵՐՈՐԴ ՇԱԲԱԹ. — Ձեկուցել ընթացիկ նյութի մասին (կամպանիա, սոցիալական պայմանագիր, վորոշում, Էքսկուրսիա և այլն) — (1 ժամ): Մանոթ հոգվածների ինտցենիրովկան (1 ժամ): Գիտակցական արտադրություն ծանոթ կտորից ($\frac{1}{2}$ ժամ): Իր ընկերների ձեռագիր տեքստի ընթերցում ($\frac{1}{2}$ ժամ): Արտահայտիչ ընթերցանության վարժություն (1 ժամ): Կազմել 5-6 հարցից բաղկացած անկետա ($\frac{1}{2}$ ժամ): Դասադրքի հոգվածների ու վոտանավորների ընթերցում և քննարկում ($\frac{5}{2}$

ժամ): Նախադասության վերլուծում հարցերով, առանց տերմինների (1 ժամ):

ՅՈՒԵՐՈՐԴ ՇԱԲԱԹ. — Անգիր անել տալ գեղարվեստական մի կտոր (1 ժամ): Սովորեցնել նրա մեջ յեղող դժվար բառերի ուղղադրությունը ($\frac{1}{2}$ ժամ): Մանոթ կտոր կարգալ դերբով (1 ժամ): Դիտողությունների գրավոր մշակում՝ ուսուցչի ոգնությամբ (պլան, վերնագիր, կորեկտիվ շարադրություն) — ($\frac{1}{2}$ ժամ): Դասադրքի հոգվածների ու վոտանավորների ընթերցում և քննարկում (5 ժամ): Յերկրորդ քառորդում սովորած նոր բառերի բառարան կազմելը (2 ժամ):

ՈՒԹԵՐՈՐԴ ՇԱԲԱԹ. — Անգիր արած գեղարվեստական կրտսրի կորեկտիվ և անհատական արտասանություն (1 ժամ): Ստուգողական թերադրություն սովորած բառերի, դարձվածքների ու քերականական կանոնների (1 ժամ):

Յերրորդ քառորդում անցածի ամփոփում (3 ժամ):

Մանր-ուրյուն. — Վախչադրության պիտի հետևել բոլոր գրավոր աշխատանքների ժամանակ:

ՅԵՐՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

ՅԵՐԿՐՈՐԴ ԳԱՈՐԳ

ԱՌԱՋԻՆ ՇԱԲԱԹ. — Պատմել կարդացած գրքույկների համառոտ բովանդակությունը (1 ժամ): Պատմելիս յերևան յեկած սխալների (բառ, միաբ և այլն) ուղղելն ու ձևերը գրատախտակի վրա ($\frac{1}{2}$ ժամ): Ռեժեղացնել արտահայտիչ ընթերցանության տեխնիկան (առողանություն, արամբարանական վորոշակի յեչտադրություն, ինտոնացիա) — (1 ժամ): Լուռ կարգալու վարժություն ($\frac{1}{2}$ ժամ): Բանավոր գեկույցի համար կազմել գրավոր ծրագիր ($\frac{1}{2}$ ժամ): Դասադրքից կարդալ և անալիզ անել (4 և Կես ժամ):

ՅԵՐԿՐՈՐԴ ՇԱԲԱԹ. — Անգիր անել տալ մի գեղարվեստական կտոր (1 ժամ): Դերերով կարդալ տալ սովորած կտորը (1 ժամ): Դասադրքից կարդալ տալ և բացատրել (3 ժամ): Համառոտ և ընդարձակ նախադասությունների համեմատություն (գրատախտակից տետրերի մեջ գրել տարուց հետո) — (1 ժամ): Ամբաստանել նախադասության գաղափարը, վորպես լեզվական միավոր, վորպես մտածության արտահայտության միավոր ($\frac{1}{2}$ ժամ): Յերթակալի և ստորոգյալի միասնությունը՝ ըստ Ե-

յուլիան և թիվով ու դեմքով (1/2 ժամ) : Գրել նկարի բովանդակությունը քերականական նպատակադրումով (յենթակայի և ստորոգյալի համաձայնությունը • համառոտ և ընդարձակ նախադասությունների դիտակցական գործադրումը) — (1 ժամ) :

ՅԵՐՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ . — Հորինել պատմություն՝ տրված մի շարք բառերի հիման վրա (1 ժամ) : Լուռ կարդալու վարժություն (1/2 ժամ) : Նկարագրել բնագիտությունից կատարած փորձը (1/2 ժամ) : Դասադրել և վոտանասյուրների ընթերցում ու վերլուծություն (4 ժամ) : Պարզել ընդարձակ նախադասություն կառուցվածքը (յենթակայի հետ կապված բառեր և ստորոգյալի հետ կապված բառեր) • փորակական, քանակական և հատկացուցիչ բառեր • պարագայական բառեր (2 ժամ) :

ՉՈՐՐՈՐԴ ՇԱԲԱԹ . — Պատմել տալ կարդացած գրքի բովանդակությունը՝ նախորդ պատրաստած պլանի • հիման վրա (1 ժամ) : Դերերով կարդալ (1 ժամ) : Դիմում գրել (ձևը մշակել լույց հետո) — (1/2 ժամ) : Կազմել կատարած աշխատանքի որագիրը (1/2 ժամ) : Դասադրելից կարդալ և վերլուծել (4 ժամ) : Գաղափար գոյականի մասին • գոյականի թիվը • հատարակ և հատակ գոյականներ : Մեծատառի գործածությունից բոլոր դեպքերը • փորձիչ հոդ • (2 ժամ) :

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՇԱԲԱԹ . — Ուսուցչի սկսած պատմությունը յերևակայությունը շարունակել վերջացնել (1 ժամ) : Լուռ կարդալու վարժություն (1/2 ժամ) : Գրել նկարի բովանդակությունը (1 ժամ) : Կատարած աշխատանքի որագիրը կազմել (1/2 ժամ) : Դասադրելից կարդալ և վերլուծել (3 ժամ) : Հոդվածում ցույց տալ, վոր ամենից շատ գործածվող բառերը գոյականներն ու գործողություն, վիճակ ցույց սվող բառերն են (1/2 ժամ) : Գոյականի փոփոխությունը նախադասություն միջոցով և հոլովների անունները (1 ժամ) : Ուղղական հոլովը վորպես յենթակա և հայցական հոլովը վորպես բուն վրացուցիչ (1/2 ժամ) :

ՎԵՅԵՐՈՐԴ ՇԱԲԱԹ . — Պատմել տալ տեսածի ռւ լրածի մասին (1 ժամ) : Լուռ կարդալու վարժություն (1/2 ժամ) : Կարդալ դերերով (1/2 ժամ) : Կազմել հետևյալ շարադրություն վրա նը (նյութը բավարար կերպով մշակելուց հետո) — (1 ժամ) : Դասադրելից կարդալ և բացատրել (3 ժամ) : Գաղափար բայի մասին • բայի յեղանակը, ժամանակը, թիվը և դեմքը : Անցողական և վոչանցողական բայեր : Բայի յոնարհումը՝ ներկա, անցյալ

և ապառնի պարզ ժամանակներով (նախադասություն մեջ) — (2 ժամ) :

ՅՈՒԵՐՈՐԴ ՇԱԲԱԹ . — Պատմել տալ կարդացած գրքի բովանդակությունը՝ նախորդ պատրաստած պլանով (1 ժամ) : Լուռ ընթերցանություն վարժություն (1/2 ժամ) : Գրել շարադրություն պատրաստած պլանի հիման վրա (1/2 ժամ) , նախորդ պահովելով մի քանի դժվար բառերի ուղղագրությունը : Դասարանում արտասանել սովորած վոտանասյուրներից (1/2 ժամ) : Դասադրելից կարդալ և վերլուծել (3 ժամ) : Նախադասություն վերլուծում տեղմիններով (1 ժամ) : Կազմել բառարան նոր սովորած բառերի (1 ժամ) :

ՈՒԹԵՐՈՐԴ ՇԱԲԱԹ . — Կրկնել և ամփոփել յերկրորդ քառորդում անցածը :

ՉՈՐՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Յերկրորդ քառորդ

ԱՌԱՋԻՆ ՇԱԲԱԹ . — Հաշվետվություն կարդացած գրքի մասին (գրքի անունը, հեղինակ, տպագրություն տեղն ու թիվ կանը, ո՞ւմ հրատարակությունն է, դիմը) • նախորդ պատրաստած պլանի համաձայն պատմել բովանդակությունը • ասել գըլտած պլանի համաձայն (1 ժամ) : Փոքրիկ բրոշյուրների, «Պիոներ կանխադր միտքը (1 ժամ) : Փոքրիկ բրոշյուրների, «Պիոներ կանխադր միտքը (1 ժամ) : Փոքրիկ բրոշյուրների վրա շարունակել արտահայտիչ ընթերցանություն վարժությունները (1 ժամ) : Դասադրելի հոդվածները կարդալ, վերլուծել, մտտերի բաժանել և վերնագիր տալ (4 ժամ) : Կատակցված կերպով գրել իր կենսագրությունը (1/2 ժամ) : Գաղափար բառերի արմատի մասին, հնչյունափոխություն (ու, ի, ե) : Ածանցում : Նախածանցներ և վերջածանցներ (ամենագործածական տեսակները) — (1 1/2 ժամ) :

ՅԵՐԿՐՈՐԴ ՇԱԲԱԹ . — Աշխատանք վրադրի վրա (1/2 ժամ) : Լուռ ընթերցում (1/2 ժամ) : Դերերով կարդալ (1 ժամ) : Շարադրություն նախորդ կազմած պլանի համաձայն (պատմվածք, նկարագրություն, եքսկուրսիա և այլն) — (1 ժամ) : Դասադրելի հոդվածները, կարդալ-վերլուծելուց հետո, մասերի բաժանելու և վերնագիր տալու վարժություն (3 ժամ) : Նախածանցների և վերջածանցների դերը բառի վերաբերմամբ, նրանց ուղղագրությունը : Կազմել նախածանցների և վերջածանցների ցանկ այբբերենական կարգով (2 ժամ) :

ՅԵՐՐՈՐԴԻ ՇԱԲԱԹ. — Զեկուցում պլանով (կատարած փորձի, տարած աշխատանքի, որվա հրատապ խնդրի և այլն վերաբերյալ) — (1 ժամ): Ընտրած թեմայով ինքնուրույն շարադրու թյուն (1 ժամ): Լուռ ընթերցանության վարժություն (1/2 ժամ): Դասադրքից կարդալ, բացատրել և մասերի բաժանել, տալով յենթավերնադրեր. պատմել բովանդակությունը (4 ժամ): Հոժանիչ և համանիչ բաներ. կազմել հոմանիչներ և համանիչներ ընդհանուր (1/2 ժամ): Նախադրություն, հետադրություն, շարժակ. կազմել նրանց ցուցակը (ոգտվել դասադրքից) — (1 ժամ): Ներադույն հասցավումներ (չբ՛լկոմ, չբ՛լգործկոմ, ՀՄՈՂ, ՄՈՊՐ, Համկհ և այլն) — (1/2 ժամ):

ՉՈՐՐՈՐԴԻ ՇԱԲԱԹ. — Աշխատանք լրացրի վրա (1/2 ժամ): Լուռ ընթերցանություն (1/2 ժամ): Կազմել գործնական գրություններ (ստացական, լիազորագիր, հրավեր, արձանագրություն և այլն) — 1 ժամ): Դասադրքից կարդալ, վերլուծել, պատմել (4 ժամ): Ուղղագրական վարժություններ բնագաձայնների շուրջը (պ—բ—փ. —տ—դ—թ. —ծ—ձ—ց. —ճ—ջ—չ. —կ—զ—ք. դ—խ—ժ—ղ—չ. 1 ս—ղ) առանձնապես ընդհանուր (2 ժամ):

ՀԻՆԳԵՐՈՐԴԻ ՇԱԲԱԹ. — Այբուբենի կրկնության և գրացուցակից ու բառարանից ուղղակի ձևերը (1 ժամ): Լուռ ընթերցանություն (1/2 ժամ): Դերերով կարդալ (1/2 ժամ): Գրել ուսուցչի պատմածը (գրելով գրատախտակի վրա դժվար բառերը) — (1 ժամ): Դասադրքից կարդալ, վերլուծել, պատմել (4 ժամ): Նախադասության վերլուծում տեղիներով (1 ժամ):

ՎԵՅԵՐՈՐԴԻ ՇԱԲԱԹ. — Բառարանից ուղղակի ձևերը (1 ժամ): Պատմել տալ տեսածն ու յաճը (1 ժամ): Գրել համեմատաբար ավելի բարդ նկարի բովանդակությունը՝ նախորդ կազմված պլանով (1 ժամ): Դասադրքից կարդալ, վերլուծել, պատմել (4 ժամ): Սովորած հոգվածի մեջ գիտել կետադրությունն ու առոգանության նշանները (1 ժամ):

ՅՈԹԵՐՈՐԴԻ ՇԱԲԱԹ. — Աշխատանք լրացրի և հանդեսների վրա (1 ժամ): Գրացուցակից և բառարանից ուղղակի վարժություններ (1 ժամ): Գործնական գրություններ կազմելը (1 ժ): Դասադրքից կարդալ, վերլուծել, պատմել (4 ժամ): Ծանոթ հոգվածի ընթերցանություն կետադրության և առոգանության նշանների տեսակետից (1 ժամ):

ՈՒԹԵՐՈՐԴԻ (կես) ՇԱԲԱԹ. — Կրկնություն և ամփոփում յերկրորդ քառորդում անցածի:

ՀԻՆԳԵՐՈՐԴԻ ԳԱՍԱՐԱՆ

ՅԵՐԿՐՈՐԴ ԲԱՌՈՂ

ԱՌԱՋԻՆ ՇԱԲԱԹ. — Հոգվածի կամ փոքրիկ բրոշյուրի բանավոր վերլուծություն՝ հասարակագիտական և գրական-գեղարվեստական տեսակետից (2 ժամ): Մշակված պլանով պատ շարադրություն (1 ժամ): Ծանոթություն գրքի արտաքինի հետ՝ ավելի մանրամասնորեն (անուն, հեղինակ, հրատարակություն, տեղ, տարեթիվ, տիրաժ, արտաձև, ցանկ, բաժին, գլուխ և այլն) — (1 ժամ): Դասադրքից կարդալ, վերլուծել և լրությամբ պատմել (3 ժամ): Գաղափար խոսքի մասերի մասին և նրանց առնչությունը, գոյականի և բայի վերաբերմամբ (1 ժամ):

ՅԵՐԿՐՈՐԴԻ ՇԱԲԱԹ. — Հոգվածի շարադրական վերլուծություն (մասերը, յենթավերնադրեր, պլան, կոնսպեկտ (1 ժամ): Լուռ ընթերցանություն՝ շարադրության համար ցիտատներ ընտրելու նպատակով (2 ժ.): Շարադրություն պարզ թեմայի մասին (նախորդ մշակված պլանով) — (1 ժամ): Լրագրական հոգվածի կրկնակի ընթերցում և հասարակագիտական-գեղարվեստական վերլուծում (2 ժամ): Ածական և մակբայ. նրանց տարբերությունը. նրանց տեսակները (1 ժամ): Հոգվածում նշել մակբայներն ու ածականները (1 ժամ):

ՅԵՐՐՈՐԴԻ ՇԱԲԱԹ. — Զեկուցում պարզ կոնսպեկտի ոգնությամբ (1 ժամ): Կազմել պատի թերթի համար հոգված (1 ժ.): Դասադրքի հոգվածների գեղարվեստական հասարակագիտական վերլուծություն (4 ժամ): Բայ և դերբայ. բայի սեռը և դերբայի տեսակները. դերբայների հոլովական գործածական ձևերը (2 ժամ):

ՉՈՐՐՈՐԴԻ ՇԱԲԱԹ. — Կազմել գործնական գրություններ (սոցմբցման պայմանագիր) — (1 ժամ): Ծանոթանալ դպրոցական գրագրանի կանոնադրությանը (1 ժամ): Արտահայտիչ ընթերցանություն գրքից կամ բրոշյուրից (1 ժամ): Գրել ծանոթ հերոսի կամ գործող անձի բնութագրությունը (1 ժամ): Դասադրքի հոգվածների վերլուծում (3 ժամ): Ոժանդակ բայի խոնարհումը՝ ներկա և անցյալ ժամանակներով: Ոժանդակ բայի դերը մյուս բայերի վերաբերմամբ: Կրկնել բայի յեղանակները (1 ժամ):

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԾԱԲԱԹ. — Հոգևածի շարադրական վերլուծություն (պլանը և կոնսպեկտը) — (1 ժամ): Ծանոթանալ գրադարանի գրացուցակի հիմնական բաժիններին և նրանից ոգտվելու ձևվերին (1 ժամ): Մշակված պլանով ազատ շարադրություն (1 ժամ): Դասադրքից կարդալ, վերլուծել, պատմել (4 ժամ): Սահմանական յեղանակի բոլոր ժամանակները: ըզձախան, յենթադրական և հարկադրական յեղանակներ: Կանոնավոր բայի խոնարհումը (1 ժամ):

ՎԵՅԵՐՈՐԴ ԾԱԲԱԹ. — Կազմել պատի թերթի համար հոգևած (1 ժամ): Լուս ընթերցանություն՝ կարված գրքով աշխատելու հետ (պլան և կոնսպեկտ կազմել, ցիտատ և ալլը) — (1 ժ): Արտահայտիչ ընթերցանություն (1 ժամ): Դասադրքից կարդալ վերլուծել, պատմել (4 ժամ): Անկանոն բայի խոնարհումը: Կրավորական բայերի խոնարհումը (1 ժամ):

ՅՈՒԹԵՐՈՐԴ ԾԱԲԱԹ. — Կազմել գործնական գրություն (լուսացական և լիադորագիր) — (1 ժամ): Իերերով կարդալ (1 ժամ): Ինքնակենսագրություն (1 ժամ): Դասադրքից կարդալ, վերլուծել, պատմել (3 ժամ): Թվական անուն (քանակական և դասական): Թվականների ուղղագրությունը ((բարդ և կցորդ ամանցները, թվականները տարերով գրելու կանոնները) — (1 ժամ): Նախադասության քերականական վերլուծություն — (1 ժամ):

ՈՒԹԵՐՈՐԴ (ԿԵՍ) ԾԱԲԱԹ. — Կրկնել և ամփոփել յերկրորդ քառորդում անցածը:

ՎԵՅԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Յերկրորդ քառորդ

ԱՌԱՋԻՆ ԾԱԲԱԹ. — Բանավոր դեկլացում թեղերով (1 ժ.) Կազմել բարդ արձանագրություն (1 ժամ): Դասադրքից կարդալ, վերլուծել և պատմել (3 ժամ): Նախադասության տիպերը (պարզ հակառուտ, պարզ ընդարձակ, միավորյալ և բարդ) — (1 ժամ):

ՅԵՐԿՐՈՐԴ ԾԱԲԱԹ. — Ձեկուցել կարդացած գրքի բովանդակությունը (1 ժամ): Կազմել շարադրության մանրամասն նախադիծ (նախաբանով և վերջաբանով) — (1 ժամ): Դասադրքից կարդալ, վերլուծել և պատմել (3 ժամ): Շարահյուսությունը վորպես նախադասությունների կառուցվածքի և կապակցության ուսմունք: Կրկնել և խորացնել բայերի սեռը (չեղոք, ներգործական և կրավորական); պատճառական բայեր (1 ժամ):

ՅԵՐՐՈՐԴ ԾԱԲԱԹ. — Յերկի գրական - դեղարվեստական պարզ քննադատական վերլուծություն (1 ժամ): Ինքնուրույն գրավյր աշխատանք (1 ժամ): Դասադրքից կարդալ, վերլուծել, պատմել (3 ժամ): Համադաս նախադասություններ (նախադասությունների համադասական կապակցությունը) նախադասությունների ստորադասական կապակցությունը (գլխավոր և յերկրորդական նախադասություններ (1 ժամ):

ՉՈՐՐՈՐԴ ԾԱԲԱԹ. — Գործնական գրություններ ավելի խորացած ձգով (կոչ, ախտ) — (1 ժամ): Բանավոր կերպով բնութագրել ծանոթ գրվածքի կործող անձը, կենտրոնական զեմքը (1 ժամ): Դասադրքի հոգևածների զեղարվեստական ընթերցանություն և վերլուծություն (3 ժամ): Ուսումնասիրել մի հոգևածի շարահյուսությունը (նախադասությունների կառուցվածքը ու կապակցությունը) — (1 ժամ):

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԾԱԲԱԹ. — Թղթակցություն «Պիոներ կանչ»-ին (1 ժամ): Տպավորությունները պատմել (1 ժամ): Դասադրքի հոգևածների զեղարվեստական ընթերցանություն (3 ժամ): Ներգործական, կրավորական և չեղոք բայերի ուսումնասիրությունը գրքի հոգևածներում (1 ժամ):

ՎԵՅԵՐՈՐԴ ԾԱԲԱԹ. — Ձեկուցել կարդացած գրքի բովանդակությունը (2 ժամ): Շարադրություն նշված թեմայով և նախագծված պլանով (1 ժամ): Դասադրքի հոգևածների զեղարվեստական ընթերցանություն և վերլուծություն (2 ժամ): Ուսումնասիրել բարդ նախադասությունները (1 ժամ):

ՅՈՒԹԵՐՈՐԴ ԾԱԲԱԹ. — Արտասանել չափածո գրվածք (1 ժամ): Կազմել գործնական գրություն (արձանագրություն) — (1 ժամ): Դասադրքի հոգևածների զեղարվեստական ընթերցանություն և վերլուծություն (3 ժամ): Շարունակել բարդ նախադասությունների ուսումնասիրությունը: Առաջադաս, միջադաս և վերջադաս յերկրորդական նախադասություն (1 ժամ):

ՈՒԹԵՐՈՐԴ (ԿԵՍ) ԾԱԲԱԹ. — Կրկնել և ամփոփել յերկրորդ քառորդում անցածը:

ՅՈՒԹԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Յերկրորդ քառորդ

ԱՌԱՋԻՆ ԾԱԲԱԹ. — Յելույթներ գյուղի և քաղաքի հասարակական - արտադրական կյանքի շուրջը (1 ժամ): Նույնը գարձրնել գրավոր շարադրության նյութ (1 ժամ): Դասադրքի հոգևածների ընթերցում, վերլուծություն և պատմել (3 ժամ):



բարբարյան վոճերի տարբեր վերապրումներն այսօրվա հայերենում (ընդ ամին, այսու հանդերձ, այնուամենայնիվ, գոնե, գուցե, իհարկե, համարյա և այլն) — (1 ժամ) :

ՅԵՐԿՐՈՐԴ ՇԱԲԱԹ. — Գեղեցիկ և արտահայտիչ ընթերցանություն՝ ավելի ճշտված ձևով (1 ժամ) : Թեղիսներ կազմել (1 ժամ) : Դասագրքի նյութերի ավելի խորը վերլուծում (3 ժ.) : Նույնանիշ, հոմանիշ, հականիշ բառեր, սրանց գործածությունը և դասակարգային վերաբերմունքի արտահայտությունը նրանց միջոցով (կուլակ բառը հարուստ գլուղացի բառով փոխարինելու տենդենցը. դիկտատուրա և բնութիւն. վարժապետ և ուսուցիչ) — (1 ժամ) :

ՅԵՐՐՈՐԴ ՇԱԲԱԹ. — Ձեկուցել կարգացած գրքի բովանդակությունը (1 ժամ) : Շարադրություն ազատ թեմայով (1 ժ.) : Դասագրքի հոդվածների գեղարվեստական անալիզ (3 ժամ) : Բառակազմության նոր ձևեր (հասկանալիներ) ժամանակակից հայերենում (Ժողովուրդ, Ժողովուս, կոմկուս, և այլն) : հասարակական տեսակները. հոդակապի բացակայությունը նրանց մեջ (1 ժամ) :

ՉՈՐՐՈՐԴ ՇԱԲԱԹ. — Ծանոթություն թերթի խմբագրականին (պարզել թեմատիկան, կարողանալ վերլուծել և ըմբռնել խմբագրականի կառուցվածքը, պարզել վոճի առանձնահատկությունները) — (1 ժամ) : Վոճի դասակարգայնությունը դրսևիություն (1 ժամ) : Դասագրքից կարդալ և վերլուծել (3 ժամ) : Գրաբարյան վորոշ անանցների և ձևերի կենդանացումը և դրա անհրաժեշտությունը կառուցվող պրոլետարական հայերենի համար (իրն ինքնին, գործարք, լուծարք, հանույթ, գործարկել, թըվարկել, քննարկել, ի կատար անել և այլն) — (1 ժամ) :

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՇԱԲԱԹ. — Ձեկուցել կարգացած գրքի բովանդակությունը (1 ժամ) : Կազմել բանաձև (1 ժամ) : Դասագրքի նյութերի վերլուծություն (3 ժամ) : Կարդալ Լենինից և Ստալինից կտորներ՝ վոճարանական տեսակետից (1 ժամ) :

ՎԵՅԵՐՈՐԴ ՇԱԲԱԹ. — Արտահայտիչ ընթերցանություն (1 ժամ) : Կազմել թեղիսներ (1 ժամ) : Դասագրքի նյութերի վերլուծություն (3 ժամ) : Տարրական գաղափար լեզվի ծագման մասին (1 ժամ) :

ՅՈՐԹԵՐՈՐԴ ՇԱԲԱԹ. — Արտասանել տրված գեղարվեստական կտորներից (1 ժամ) : Շարադրություն նշված թեմայով և նախազգծված պլանով (1 ժամ) : Դասագրքի նյութերի գեղարվեստական

տական անալիզ (3 ժամ) : Տարրական գաղափար լեզվի ծագման մասին (1 ժամ) :

ՈՒԹԵՐՈՐԴ (ԿԵՍ) ՇԱԲԱԹ. — Կրկնել և ամփոփել յերկրորդ քառորդում անցածը :

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ 1934—35 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ՅԵՐԿՐՈՐԴ ԳԱՌՈՐԴԻ ՀԱՄԱՐ

1. Դասարանական ընթերցանության համար

ՅԵՐՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ.

Հովհ. Թումանյան — «Տերն ու ծառան». «Համերգ». «Սուսլիկ վորսկանը» :

2. Ա. ք. Խնկոյան — «Կապիկն ու ախնոցները». «Ճպուռն ու մրջյունը». «Մկների Ժողովը» :

3. Վ. Միրաբյան — «Գառը մեր տարիս» :

4. Հ. Հակոբյան — «Գանձեցի յերգը» :

5. Ստ. Զարյան — «Մի գիշեր անտառում» :

ՉՈՐՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

1. Բաֆֆի — «Մի որսվար հող» :

2. Վ. Փափազյան — «Արտը» :

3. Ճուղայան — Շաշ Պետին ու գիթ Ոհանը» :

4. Հով. Թումանյան — «Գուլթանի յերգը». «Գիջորը» (Կըրձատված) :

5. Վ. Միրաբյան — «Բոչը» :

6. Յե. Զարեհց. — «Լենինը» :

7. Նայիրի Զարյան — Հատվածներ «Ռուչանի քարավից» :

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

1. Հ. Հակոբյան. — «Բուլձեիկ Ե Շիր կանալը» :

2. Յե. Զարեհց. — «Գարուն», «Մահվան քայլերգ» :

4. Ղ. Աղայան. — «Ճախարակ», «Ճաղարենց թոթոսը» (հատված «Յերկու քույր»-ից) :

5. Հ. Թումանյան. — «Անիծած հարսը» :

6. Մ. Շաֆիլի. — «Կարմիր Հեղատոտան» :

7. Սերաֆիմովիչ. — «Յերկաթե հեղեղ» (հատվածներ) :

8. Վ. Հյուգո. — «Գավրոշը» (կրճատ) :

ՎԵՅՆԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

1. Խ. Աբովյան. — «Առաջաբան» (հատված «Վերք Հայաստանի»-ից) :
2. Պերն Պոռչյան. — «Միկիտան Սաքոն» :
3. Մուրացյան. — «Նոյի ազոավը» (կրճատ.) :
4. Հ. Հովհաննիսյան. — «Ախ տվեք ինձ». «Արտավազը»,
5. Հ. Պարոնյան. — «Աբրիսոյում աղան և բանաստեղծը» (հատված «Մեծ. մուրացիականներ»-ից) :
6. Փափազյան Վ. — «Լուր դա զուր» :
7. Հովհ. Թուխանյան. — «Լուսեցի Սաքոն», «Անուշ», (հատվածներ). «Մասունցի Դավիթ» :
8. Շիրվանզադե. — «Վարդան Ահրամյան», «Հրդեհը նավթահանքում» (հատվածներ «Բատսից») :

ՅՈՒԹԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

1. Նար-Դոս. — «Նեղ որերից մեկը», «Աննա Սարոյան» (հատվածներ) :
2. Ա. Իսահակյան. — «Ալադյոզի մանկներ» (հատվածներ) «Կյանքի կռվում», «Ախ մեր սիրտը» :
3. Շ. Կուրղինյան. — «Հանդերք ջահերը», «Բանվորները» :
4. Վ. Տերյան. — «Լուսածագին», «Պահիր վառ», «Արևածագ», «Գարուն», «Վերադարձ», «Շշուկ ու շրշուն», «Տրամուրթյուն», «Հրաժեշտի դաղերը» :
5. Հ. Հակոբյան. — «Կարմիր գարնան», «Հեղափոխություն» «Մեռան ջկորան», «Նոր առավոտ» :

2. Արսապյուրցական ընթերցանության համար

ՅԵՐՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

1. Ազնիվցեվ. — «Հեքիաթ Կոմիտերնի մասին» :
2. Այազան. — «Սորհուրդների համար» :
3. Ադաբաբ. — «Չալոյի ելը» :
4. Անանյան Վ. — «Վոչ մի դաջլ մեր հանդերում» :
5. Դանցիգեր. — «Թե վանյան ինչո՞ւ դարձավ տղաչու» :
6. Չամոյսկի. — «Նամակ Լենինին» :
7. Ջոքին. — «Ինչպես Պետրկը Լենինի մոտ գնաց» :

ԶՈՐՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

1. Անանյան Վ. — «Կրակե ողակի մեջ» :
2. Գարբիելյան Ռ. — «Ուվկյանի թագավորը» :
3. Գարշին. — «Չորս որ պատերազմի դաշտում» :
4. Գոդե. — «Գեղեցիկ Նիվերնեզա» :
5. Դոբոլսով. — «Բոլշևիկ տղան» :
6. Դուրգարյան Մ. — (Կազմող) — Պատանի հեղափոխականներ :
7. Խաչին. — Նավթ :

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

1. Հ. Հակոբյան. — «Բանաստեղծություններ» :
2. Ստ. Զորյան. — «Հերոս կոմունարը», «Գրադարանի աղջիկը» :
3. Մ. Գարբիելյան. — Չաղացյան Անտոնը :

ՎԵՅՆԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

1. Խ. Աբովյան. — «Պարսպ վախտի խաղալիք» :
2. Ազայան Ղ. — «Յերկու քույր» :
3. Պ. Պոռչյան. — «Ցեցեր» :

ՅՈՒԹԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

1. Նար-Դոս. — «Մեր թաղը», «Տանտիրոջ աղջիկը» :
2. Ա. Իսահակյան. — «Բանաստեղծություններ» :
3. Վ. Տերյան. — «100 բանաստեղծություն» :

Հ. Գ. ԺԱՄԿՈՉՅԱՆ

ՅՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ ՀԱՅԵՐԵՆ ԼԵԶՎԻ ՅԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

I. ԲԱՆԱՎՈՐ ԽՈՍՔ

1. Լողունգներին, վոտանավորներին և մյուս զեղարվեստական կոտորներին ինչպես անգիր անելը, նույնպես կոչելիս և անհատական արտասանությունը կարող է կատարվել միայն այն դեպքում, յեթե նրանք նախորդ մշակված են այնպես, վոր նրանց մեջ անհասկանալի բառ կամ արտահայտություն չի մտնի և իմաստն ամբողջապես պարզ է աշակերտներին համար: Իմաստական մշակումն ու արտասանությունը կարող են իրար հաջորդել կամ միևնույն ժամին և կամ ժամերով ու որերով անջատված, նախած արտադրական պլանին և, վոր գլխավորն է, աշակերտի յուրացման կարողությանը: Հատկանալի յե, վոր նրանք (լողունգները, վոտանավորները և այլն) պիտի համապատասխանեն յերեխաների տարիքային առանձնահատկություններին և առաջացնեն վստահեցրածություն:

2. Արտահայտիչ ընթերցանությունը նույնպես՝ պիտի հաջորդի նյութի իմաստական և ձևական անուղիչին: Ծրագրային նյութի մեջ նշված արտահայտիչ ընթերցանություններն յենթադրում են նախապարտադրված և մշակված հոգով կամ հատված: Այստեղ հիմնական ելման տեղն են հանդիսանում են ինտուևացիան ու պաուզան, վորոնք հնարավորություն են տալիս ճայնի յերեկեջներին, միմիկային և շնչառության հարմարեցման միջոցով արտահայտել գրվածքի իմաստը: Նախ ուսուցիչն է կարողում, ապա աշակերտները (սկզբում լավագույնները):

3. Առանձին ուղարկություն պիտի դարձնել լուս ընթերցանության վրա, վորպես ինքնուրույն աշխատելու մի հիմնական ունակության վրա: Այդ նպատակով յերթման կարելի յե նաև նոր դասը նախ լուս ընթերցանությամբ կատարել տալ և ապա

բարձրաձայն, ստուգելու համար, յե վորքան են կարողանում ուղտվել անմիջական լուս ընթերցանությունից՝ կարգալու տեխնիկայի տեսակետից. մյուս դեպքերում՝ իմաստը յուրացնելու տեսակետից: Իսկ բարձր դասարաններում՝ իմաստի և նրանց, աշխնքն աշակերտներին ընտրած ցիտատների միջոցով: Յերթման ստուգել նաև լուս ընթերցանության արագությունը միջին հաջվով (դասարանի ծայալով), վորոչ ժամանակամիջոցում: Դրա համար աշակերտներին նախորդ վոչինչ չի ազդարարվում, այլ ուսուցիչն ինքը, վորոչ ժամանակից հետո, առաջարկում է ընդհատել լուս ընթերցումը և նշան անել, յե մինչև վորտեղ է կարգացել նրանցից յուրաքանչյուրը և ապա հաջվում ստուգելով կամ բառերով: Նման ստուգումներ կարելի յե կատարել ութերորդ (կես) շաբաթում:

4. Իր տեսածն ու լսածը կամ կարգացած գրքուկը պատմել տալն հետապնդում է հիմնականում մի նպատակ. այն է՝ կարողանալ իր մտքերն հաղորդել ուրիշին՝ կապակցված ու կանդնավոր կերպով: Այդ իսկ պատճառով պատմելիս ուսուցիչը պետք է ուշադրությամբ հետևի և իր առաջ դրված յեթե յե յե նշանակի աշակերտի կատարած տիպիկ սխալները (լեզվական) և վերջացնելուց հետո միայն, դրաստախտակի վրա գրելով նրանց ուղիղ ձևը, հրավերի վոչ միայն պատմողին, այլև ամբողջ դասարանի ուղարկությունը: Իսկ իմաստական սխալներն ուղղում է անմիջապես, պատմելու ընթացքում: Բոլորովին արգելել՝ պատմելու ընթացքում «ընկեր» բառը գործածելը. մի բան, վոր, տվյալ դեպքում, յեթան է ներքին ինքնամիտման բացակայության. և իսկապես, հաճախ ավելի շատ «ընկեր» բառն են կրկնում՝ քան յե պատմում:

«Պատմել կարգացած գրքի բովանդակությունը» առաջադրությունն յենթադրում է ուսուցչի կողմից նշված և հանձնաբարված արտադրարտական ընթերցանության բաժինը:

5. Կարգացած գիրքը պատմել տալը, հետապնդելով մտքերի կանոնավոր և ճիշտ արտահայտելուն, պիտի հարստացնի աշակերտներին բանավոր (և գրավոր) խոսքը նոր բառերով ու դարձվածքներով, պիտի վարժեցնի կանոնավոր նախադասություն կազմելուն, դասակարգելու մտածելուն, դասակարգելի մտեցման, քննադատական մոզուն, հույզերն ու պարզմաները գործողության վերածելուն և այլն:

II. ԳՐԱՎՈՐ ԽՈՍՔ

1. Գրավոր խոսքի մշակումն հիմնականում չլիտի անջատել բանավոր խոսքի մշակումից: Բայց պիտի իմանալ, վոր ա-

ուսմին դեպքում լեզվի կուլտուրայի կանոններն ու որենքներն հետապնդելու խնդիրն ավելի մեծ չափով է զբաղեցնում աշակերտին, քան յերկրորդ դեպքում: Իրանով էլ շեշտում է նրանց առանձնահատկությունները:

Ուսուցիչը գրավոր խոսքի մշակման ժամանակ ավելի լայն հրահարավորություն պիտի տալ աշակերտներին. այն է՝ գրելիք նյութը նախորոք մշակել ուսուցչի ոգնությունով (նախադատարաս ապկան դրույց, բառարան, սլոան և այլն), գրավորն սուղեկուց հետո յուրաքանչյուր աշակերտի հանցնել նրանց կատարած սրխալների ուղիղ ձևը: Դա կատարվում է այսպես. կամ դասարանի ծավալով կատարված ընդհանուր սխալներն են հաշվի առնվում և նրանց ուղիղ ձևերը ցուցադրվում գրատախտակի միջոցով, և կամ յուրաքանչյուր անգամ 3-4 գրավորի սխալներն են ուղղվում (այս դեպքում թուղթերինը), և ցուցադրվում նրանց ուղիղ ձևերն ամբողջ դասարանի համար:

2. Նախ՝ ուրիշի մտքերը հատկանալն ու գրավոր արտահայտելը, հետո իր մտքերը կարողանալ գրավոր արտահայտելը կազմում են հիմնական ծանրություն կենտրոնները՝ գրավոր խոսքի մշակման ժամանակ: Առաջին դեպքում (ստորին դասարաններում գլխավորապես մշակված ուսումնասիրված նյութն է գրավորի որոշիտ դառնում, յերկրորդ դեպքում (բարձր դասարաններում գլխավորապես) ինքնուրույն սլոանավորված սղատ թեմաներն են դառնում գրավորի նյութ: Յերկու դեպքում էլ թեմատիկան կազմում են սոցիալիստական շինարարության ու պայքարի խնդիրներն՝ արտահայտված պատկերներով: Այլ կերպ ասած՝ «արդիականությունն իր պատմական շարժման մեջ, իրեն պայմանավորող անցյալով և հեռանկարներով»:

3. Առաջին աստիճանի դպրոցներում կարիք չկա յերկարաշունչ գրավորներ տալու. ուրիշ խոսքով՝ վրչ թե քանակը, այլ վորակը պիտի լինի ուշադրության կենտրոնում: Հնարավոր սրխալները կանխելու խնդիրն պիտի առանձին ուշադրություն դարձրել: Իսկ գրավորների ժամանակ ուսուցչիչը նախորոք ուսում նստիրում է նյութն ու նրա մեջ յեղող դժվար բառերը (ուղղագրության և արտասանության տեսակետից) գրում գրատախտակի վրա և նրանց վրա հրավիրում աշակերտներին ուշադրությունը:

III. ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ՈՒՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Քերականության դերն հիմնականում այն է, վոր գիտակցական վերաբերմունք մշակի աշակերտների մեջ՝ դեպի լե-

զուն: Քերականության յուսարձակով պարզաբանվում և յուսավորվում են լեզվաշինարարական խնդիրները: Ուսուցիչը քերականության ավանդվում է բանավոր և գրավոր խոսքի հետ սերտ կապակցությունով, սխալներն ավելի կերպով: Իսկ դա չի փանդարում, վոր քերականության վորոշ կատեգորիաների համար առանձին ժամեր հատկացվեն:

2. Ինչպես ծրագրներում շեշտված է՝ քերականության դասարաններում սկսվում է յերրորդ դասարանից, վորտեղ արվում են նախադասության հիմնական հատկությունները՝ առանց գլխական սահմանումների: Չորրորդ դասարանում արվում է բարդ նախադասությունը: Իսկ առաջին և յերկրորդ դասարաններում պարզ համառոտ (առաջին դասարան) և սլոան ընդարձակ (յերկրորդ դասարան) նախադասություններն՝ առանց տեքմիկների, նախադասության կառուցելն ու հարցերով վերլուծելը:

3. Ուղղագրության սովորեցնելիս պիտի ինկատի ունենալ, վոր հայերենի ուղղագրությունը դժվարացնող ամենադժվար պատճառը մեր այբուբենի յեռանիչ և յերկանիչ հատկությունն է (պ-բ-փ, ա-ղ-թ, ծ-ձ-ց, դ-ս և այլն). ուսուցիչը աստիճանի դպրոցում առանձնապես ուշադրություն պիտի դարձնել այդ հանգամանքի վրա և հաճախակի ուղղագրական վարժություններ կատարել: Այդ հանգամանքից էլ բղխում է գրությունը և արտասանության մարտնչող բառերի ուղղագրական դժվարությունը, ը-ի ազդեցությունը իրեն հաջորդող մի շարք բաղաձայնների վրա (բ, ձ, դ, ջ, և այլն): Անցյալ դերբայների և վերջածանցների գրությունը, հնչյունափոխությունը և այլն: Այդ իսկ պատճառով՝ յուրաքանչյուր գրավոր պետք է ունենա նաև ուղղագրական նարտակաղբում:

4. Առաջին դասարանից սկսած պիտի կազմել ուղղագրական բառարան և շարունակել մինչև յոթերորդ դասարանի վերջը: հավաքված բառերը վերածել այբուբենական կարգի՝ յուրաքանչյուր բառորդի վերջում:

ՆԱՍԱԳԱՍՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒՄԸ

Նախադասության վերլուծումը կատարվում է յերկու տեսակետից. ըստ մասանց բանի և ըստ մասանց նախադասության: Առաջին դեպքում վորոշվում են բառերի կատեգորիաները (խոսքի առանձին մասերը բառերի վոր տեսակին են պատկանում), յերկրորդ դեպքում՝ բառերի Փունկցիան, պաշտոնը նախադասության մեջ: Առաջին և յերկրորդ դասարաններում նման վերլուծություններ չեն կատարվում: Միայն յերրորդ դասարանից ըս-

կազմում են նրանց տարրերը և աստիճանաբար լրացվում ու խորացվում են հաջորդ դասարաններում, համաձայն ծրագրային նյութի պլանավորման:

ԻՆՉՊԵՍ ՎԵՐԼՈՒԾԵԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ

ՅԵՐՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Ուսուցիչն ընտրում է մի ծանոթ կայծ հողված և մի անգամ կարգալուսց կամ կարգալ տալուց հետո՝ հայտնում զատի նպատակը. «այսօր մենք պիտի ծանոթանանք նախադասութեանն առանձին մասերին»:

Այդ նպատակով ուսուցիչը դասարանի հետ միասին հայտնաբերում է, թե տվյալ հողվածում քանի՞ նախադասութեան կա: Առաջին նախադասութեանն ինքն է կարգում. մնացածը շարունակում են աշակերտները կարգալ, ամեն մեկը մի նախադասութեան: Ապա վերականգնում նրանց իմաստական կապը՝ վերադառնալ մի ամբողջութեան: Հետո միայն վերցնում նախադասութեաննեբից մեկը, վերադառնալ ամբողջ մի մասը, իրար հետ կապված մտքերից մեկը: Յերրորդ դասարանի համար մատչելի յե նախ ըստ մասանց նախադասութեան վերլուծելը: Յենթակառն է ստորոգյալը գտնելու համար տրվում են այն հարցերը. «այստեղ խոսքն ո՞ւմ մասին է կամ ինչի՞ մասին է» (յենթական), «ի՞նչ է ասվում նրա մասին» (ստորոգյալ): Այլ կերպ չը պիտի ղենել հարցերը և վերլուծութեանը պիտի սկսել անպայման յենթակայից և վոչ ստորոգյալից. որինակ. — «կոլխոզնիկը վարում է» . այստեղ խոսքը կոլխոզնիկի մասին է: Նրա համար ասվում է՝ վարում է: Յեթե բուն լրացուցիչ կա՝ հարցը տրվում է յենթակայի և ստորոգյալի մաս: Այսպես որինակ. «կոլխոզնիկը վարում է արտը» նախադասութեան յենթական ու ստորոգյալը գրտնելուց հետո, բուն լրացուցիչի համար հարցը տրվում է այսպես «կոլխոզնիկը վարում է՝ ինչը» — արտը (բուն լրացուցիչ): Նախադասութեանը բացի բուն լրացուցիչից ունենում է նաև ուրիշ լրացուցիչներ, կապված յենթակայի և ստորոգյալի հետ. նրանք ընդհանուր անունով կոչվում են լրացուցիչներ (յենթակայի կամ ստորոգյալի):

Ավելի ուշ, յերրորդ կամ չորրորդ քառորդում, յերբ գաղափար կտրվի գոյականի և բայի մասին, վերլուծութեանը կատարվում է նաև ըստ մասանց նախադասութեան: Վերցնենք նույն նախադասութեանը. «կոլխոզնիկը վարում է արտը»: Այս դեպքում հարցերով չենք առաջնորդվում, այլ հերթով ասում ենք.

թե բառերի վո՞ր կատեգորիաներն են պատկանում այդ խոսքի մասերը. որինակ — կոլխոզնիկը՝ գոյական է, վարում է՝ բայ է, արտը՝ գոյական է:

ԻՆՉՊԵՍ ԿԱՌՈՒՅԵԼ ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ

Դրա համար յերեխաները նախ պիտի իմանան թե ինչպե՞ս է կառուցված նախադասութեանը: Ուսուցիչը զբառատխտակի վրա գրում է յերեխաներին ծանոթ մի ընդարձակ նախադասութեան և ցույց տալիս, վո՞ր նախադասութեան գլխավոր անդամներն յենթական ու ստորոգյալն է. մնացած բոլոր բառերը լրացում են՝ մի մասը յենթակային, մյուս մասը ստորոգյալին: Որինակ՝ վերցնենք նույն նախադասութեանն ընդարձակ ձևով «մեր կոլխոզի հարվածային կոլխոզնիկն այսօր տրակտորով վարել է յերեք հեկտար հող»: Այդ նախադասութեան կառուցվածքն հայտնաբերելու համար ուսուցիչը նախ գրում է միայն յենթական և ստորոգյալը և ապա համապատասխան հարցադրութեամբ մեկմեկ ավելացնում է յենթակայի, հետո՝ ստորոգյալի լրացումները: Գրատախտակի վրա ստացվում է այսպիսի պատկեր:

1. Կոլխոզնիկը վարել է.
2. Հարվածային կոլխոզնիկը վարել է.
3. Կոլխոզի հարվածային կոլխոզնիկը վարել է.
4. Մեր կոլխոզի հարվածային կոլխոզնիկը վարել է.
5. Մեր կոլխոզի հարվածային կոլխոզնիկն այսօր վարել է.
6. Մեր կոլխոզի հարվածային կոլխոզնիկն այսօր տրակտորով վարել է.
7. Մեր կոլխոզի հարվածային կոլխոզնիկն այսօր տրակտորով վարել է յերեք հեկտար.
8. Մեր կոլխոզի հարվածային կոլխոզնիկն այսօր տրակտորով վարել է յերեք հեկտար հող:

Խնդիրն ավելի պարզ կացուցանելու համար մենք վերցնենք մի քիչ ավելի ընդարձակ նախադասութեան. կարելի յե վերցնել ավելի կարճ նախադասութեան, սակայն սկզբունքը մնում է նույնը: Այսպիսի աշխատանք կարելի յե կատարել յերրորդ դասարանի չորրորդ քառորդում և 4-րդ ու 5-րդ դասարաններում:

Նախադասութեան կառուցելու վարժութեաններ կարելի յե սկսել դեռ առաջին դասարանից (յերրորդ և չորրորդ քառորդներում), ուսուցիչի ոգնութեամբ: Նախ ուսուցիչն ինքն է կազմում մի քանի նախադասութեան՝ առանձին առանձին բառերից և ապա առաջարկում դասարանին ու առանձին աշակերտներին: Որի-

նակ՝ Մուրիկ, սովորել, դաս (Մուրիկը սովորում է դասը և այլըն) : Մեր, ճազար, ապիտակ ծնել (մեր ապիտակ ճազարը ծնել է) : Այս աշխատանքը կարելի չէ կատարել և բանավոր և գրավոր, յերկու դեպքում էլ կապելով ուղղագրական խնդիրներին հետ :

Նախադասութեան վրիպ վերլուծումն ու կառուցվածքը պիտի ընդգրկենք քերականութեան բոլոր բաժինները, վորպես մի ամբողջութիւն (խմաստարանութիւն, ձևարանութիւն, հնչաբանութիւն) : Դրանով խկ ուսուցիչը խուսափած կլինի այն սխալաստիկայից և հակադիտական մոտեցումից, վոր ունեն հին քերականութիւնը և այժմ էլ դեռ տեղ-տեղ շարունակվում է : Նրանք քերականական կատեգորիաների (գոյական, ածական, բայ և այլն) վորոշումը տարով յերկու տեսակետից, այն է՝ տրամաբանական և ձևական, բառի իմաստը բաժանում են ձևից, կամ հակառակը՝ ձևը բովանդակութիւնից : Դրանից ձև առաջ է յեկել նրանց այն անողնականութիւնն ու անհեթեթութիւնը, վոր յերկան է գալիս բառերը կատեգորիաների բաժանելիս : Տրամաբանական քերականութեան հետևելով՝ որինակ՝ գեղեցկութեան գոյականը համարվում է միաժամանակ ածական, վորպես վորակ ցույց տվող : Իսկ մարտ, կոնիվ, վագֆ և այլն բառերը դասում են յին նաև բայերի շարքը, վորպես գործողութիւն ցույց տվող բառեր : Չեվական քերականութիւնը սովորեցնում է, վոր բայի անորոշ դերքայը պիտի դասել մակբայների շարքը, վորպես անխոյրիս կատեգորիա և այլն : Նման մոտեցումը քերականական կատեգորիաներին և բառերի իմաստին՝ ստղծում է միայն վոչ-դիտական, բուրժուական լեհորիային : Այլևի առաջ գնալով նրանք իրենց այդ սխալաստիկ-մեխանիստական կոնցեպցիայով՝ առանձին գոյականները կամ մակբայները նախադասութիւն են համարում, ինչպես որինակ՝ կրդեհ, այո, և այլն :

Աղբյուրներ . —

Ոգտվել՝ Ղարիբյանի «Քերականութիւնը» : Մ. Արեգյանի «Քերականութիւնից» և «Հայոց լեզվի տեսութիւն» գրքի փաստական մատերիալից, 71-րդ գլխից սկսած :

ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԱՆԱԼԻԶԻ ՏԱՐՐԵՐԸ

Գեղարվեստական յուրաքանչյուր տեսակ (ժանր) ունի իր առանձնահատկութիւնները, ուրեմն և անալիզի ուրույն մոտեցումը : Մենք, ոգտվելով կանոնիկնից այտտեղ կշեշտենք այն, ինչ վոր մոտավորապես ընդհանուր է գեղարվեստական յերկերի համար : Դրանք հետևյալներն են .

1. Յերկի բովանդակութիւնը վերարտադրող գրույց, շաղկապված առաջնորդող հարցերի ոգնութեամբ :

2. Յերկի իմաստի և գեղարվեստական կողմի անալիզը, յերբ յերևան է բերվում յերկի իդեական կողմն ու գործածված պատկերները :

3. Հերոսների բնութագիրը (խարակտիրիստիկան), և միջափայրը, վորով ամէլի լուսարանվում է իդեական կողմը :

4. Հերոսների լեզուն և հեղինակի լեզուն : Հերոսի լեզուն վորպես նրա սոցիալական ընութագրի բաղկացուցիչ տարրը, վորով աշակերտները կարողանում են վորոշել նրա դասակարգային պատկանելիութիւնը, արհեստը, վոճը և այլն :

Հեղինակի լեզվի մեջ քննութեան են առնվում առաջին հերթին նրա գործադրած արտահայտութեան միջոցները . մակղիւրներ, դիմասնութիւններ, համեմատութիւններ, փոխաբերութիւններ, չափազանցութիւններ և այլն : Ուսուցիչը մեծ չափով պիտի ոգտվի պատմաական հարցադրութեամբ :

5. Յերկի հեղինակը . — Գրվածքի իդեյական կողմը պարզելիս հենվում ենք հեղինակի անձնավորութեան վրա : Հեղինակի անձնավորութիւնը յերկի մեջ յերևան է գալիս՝ լեմայի ընտրութեան, նյութի մշակման ձևերի, ընութագրերի, դեպքերի իդեական իմաստավորման և յերկի դասակարգային այն ուղղութեան մեջ, վոր հանդիսանում է վորոշ դասակարգային իդիոլոգիայի համար մղվող պայքարի արտահայտութիւնը :

6. Գրական տեսակի ուսումնասիրութեամբ . — Պատմվածք, առակ, քնարերգութիւն և այլն :

Յերկի վերլուծութեան համար նշված այդ բոլոր մոտեցումներն անհրաժեշտ է գործադրել մեր դպրոցական սխտեմում : Ուսուցչին է թողնվում նրանց հարմարեցումը այս կամ այն դասարանին և աշակերտների տարիքային առանձնահատկութիւններին :

Վերլուծութեան ժամանակ ձեռք բերված գիտելիքներն ու հուրքերն ամբարնդելու համար պիտի կատարել և կատարել տալ ստեղծագործական աշխատանք : Այդ կատարվում է բաղմաթիվ ձեվերով . մենք այտտեղ թվում ենք գլխավորները . ա) արտահայտիչ ընթերցանութիւն վերլուծութիւնից հետո . բ) ստեղծողորժական վերապատում՝ կապված տվյալ յերկի հետ . գ) նմանողական պատմվածք՝ իրենց կյանքից . դ) յերկու յերկի համեմատութիւն . ե) իլլյուստրատիվ աշխատանք՝ յերկի բովանդակութեան վերարբրյալ, վորն արտահայտվում է՝ նկարով, ծեփով և այլն :

ինացենի ըրով կայով, տրամադիւղացիաւ և այլն: Այստեղ ստեղծագործական մտնեան այն է, վոր մտավոր պատկերը վերածվում է սոնետականի և մշակվում աչակերտների կառուցողա-ստեղծագործական յերևակայութեանը:

Հ. Գ. ԺԱՄԿՈՉՅԱՆ

ՄԱԹԵՄԱՏԻԿԱ

ՏԱՐՐԱԿԱՆ ԴՊՐՈՑ

ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆ

Յերկուդ քառուդ

ԱՌԱՋԻՆ ՇԱՖԱԹ — գումարման և հանման կրկնողութիւնն ու ամբացումը 10-ի սահմաններում (1 ժամ):

Գումարման ու հանման խնդիրների լուծումը 10-ի սահմաններում (2 ժամ):

Յերկու գործողութիւններով վարժութիւնների լուծումը (1 ժամ): Թվերի կազմութիւնը 10-ի սահմանում. թվի վերածելը յերկու ուրիշ թվերի (1 ժամ): Խնդիրների ու վարժութիւնների լուծումը թվերը վերլուծելու նկատմամբ (1 ժամ):

ՅԵՐԿՐՈՐԴ ՇԱՖԱԹ — թվերի ընթերցումն ու գրանցումը 20-ի սահմանում (2 ժամ): Ուղիղ և հակադարձ հաշիվ 20-ի սահմանում, (1 ժամ): Գումարում և հանում 20-ի սահմանում առանց տասնյակներով անցնելու* (3 ժամ):

ՅԵՐՐՈՐԴ ՇԱՖԱԹ — խնդիրների և վարժութիւնների լուծումը գումարման և հանման նկատմամբ առանց տասնյակով անցնելու (2 ժամ):

Յերկու գործողութիւնով խնդիրների լուծումը (1 ժամ): Ծանոթութիւն կիրառման հետ (1 ժամ): Վոչ մեծ ծանրութիւնների կշիռը վորոշելը, կշեռքի վրա կշեռլով 1 ժամ): Վարժութիւններ կշռի մտաւոր վորոշման վերաբերյալ (1 ժամ):

ՉՈՐՐՈՐԴ ՇԱՖԱԹ — Գումարումն ու հանումն 20-ի սահմանում, անցնելով տասնյակով (3 ժամ): Վարժութիւններ և խնդիրների լուծումը 20-ի սահմանում, գումարման և հանման բո-

*) Գումարման ու հանման որինակներ, առանց տասնյակով անցնելու՝ 12+4, 3+14, 18-6, իսկ գումարումն ու հանումը տասնյակով անցնելով՝ 8+6, 7+8, 17-9 և այլն:

լոր դեպքերի նկատմամբ (2 ժամ): Ծանոթութիւն լրորի հետ (1 ժամ):

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՇԱԲԱԹ — Վարժություններ փոքր անոթներէ տարողութիւնը վորոչելու վերաբերյալ (1 ժամ): Ուղիղ և հակա դարձ հաշիվ յերկյակներով: Ծանոթութիւն բազմապատկման գործողութիւն, բազմապատկման նշանը (1 ժամ): Բազմապատկումը 2-ի վրա: Բազմապատկման խնդիրներ (1 ժամ): Ծանոթութիւն բաժանման գործողութիւն, բաժանման նշանը. բաժանումը յերկուներով (1 ժամ): Բաժանումը 2-ի վրա (1 ժամ): Յերկուներով և 2-ի վրա բաժանման աղյուսակի ամրացումը (1 ժամ):

ՎԵՅԵՐՈՐԴ ՇԱԲԱԹ — Խնդիրներ և վարժություններ լուծումը, յերկուներով և 2-ի վրա բազմապատկման և բաժանման նկատմամբ (1 ժամ): Ուղիղ և հակադարձ հաշիվ յերկյակներով: Բազմապատկումը 3-ի վրա (1 ժամ): Բաժանումը 3-ով և 3-ի վրա (1 ժամ): Բազմապատկման աղյուսակի ամրացումը: Մի առարկայի արժեքով առարկաներ և առարկաների արժեքով մեկ առարկայի արժեքը գտնելու վերաբերյալ խնդիրների լուծումը (2 ժամ): Ուղիղ և հակադարձ հաշիվ 4-ով. բազմապատկումը 4-ի վրա (1 ժամ):

ՅՈՒԵՐՈՐԴ ՇԱԲԱԹ — Բաժանումը 4-երով և 4-ի վրա (1 ժամ): 4-ի վրա բազմապատկելու և 4-ով ու 4-ի վրա բաժանելու վերաբերյալ վարժություններ լուծումը (1 ժամ): Ուղիղ և հակադարձ հաշիվ 5-երով (20-ի սահմանում). և 5 հալատար մասերի, վարժությունների լուծումը (1 ժամ): Բազմապատկումը 6-ով, բաժանումը 6-երով և 6-ի վրա, բազմապատկումը 7-ով, բաժանումը 7-ով և 7-ի վրա (1 ժամ): Բազմապատկումը 8-ով, բաժանումը 8-ով և 8-ի վրա, բազմապատկումը 9-ով, բաժանումը 9-ով և 9-ի վրա (1 ժամ):

ՈՒԹԵՐՈՐԴ ՇԱԲԱԹ — (Կիսատ): Բազմապատկման ու բաժանման աղյուսակի ամրացումը 20-ի սահմանում (1 ժամ): Քառորդում և առաջին կիսամյակում կատարած աշխատանքների հաշվառքը (2 ժամ):

ՅԵՐԿՐՈՐԴ ԳԱՍԱՐԱՆ

ՅԵՐԿՐՈՐԴ ԲԱՌՈՐԳ

1. Լճացած ջրերից կամ ճահճատներից ձարել գորտի ձվեր և դնել ջրով լցված բանկայի մեջ, դնել արևոտ տեղում և հետո վել ամեն որ, թե ի՞նչ փոփոխութուն է կատարվում. տեսածն ու դիտածը գրի առնել:

2. Կարգալ դասադրելից համապատասխան գրուխը (ոսուցիչի ցուցմունքով):

ՉՈՐՐՈՐԿ ԴԱՍ

ԹԵՄԱՆ. — Յերկակենցանդների պոչավոր ձևերը.

ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿԸ. — Ծանոթութուն յերկակենցաղների պոչավոր ձևերի կազմության և նրանց բիոլոգիայի վերաբերյալ:

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՊԱՐԱԳԱՆԵՐ. —

- 1. Կենդանի որյեկաններ (տրիտոն, սարամանդր և այլն):
- 2. Տրիտոնը, սարամանդրը և պրոտերը ալկոհոլի մեջ:
- 3. Նրանց արտաքինն ու ներքինը ցույց տալով նկարներ:
- 4. Կայուն դասադիրք, թուղթ և գրիչ:

ԴԱՍԻ ՊԼԱՆԸ

- 1. Կապ անցյալ դասի հետ:
- 2. Պոչավոր յերկակենցաղների խմբի մեջ մտնող կենդանիները:
- 3. Տրիտոնի միջավայրն ու բիոլոգիան:

- 4. Սարմանդրայի միջավայրն ու բիոլոգիան:
- 5. Պրոթեյի կենցաղն ու բիոլոգիան:
- 6. Պոչավոր յերկակենցաղների խմբի ընդհանուր բնութագրեր:

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՏԱՆ ՀԱՄԱՐ

ԴԱՍԻ ԸՆԹԱՅԻՆ.

Դան սկսում է նրանով, վոր աշակերտներից մեկ յերկուսը պատմում են անպոչ յերկակենցաղների ընդհանուր բնութագրերը: Յետո ուսուցիչը ցույց է տալիս պոչավոր յերկակենցաղներին իրենց, նրանց պրեսպարատները, նրանց նկարները և սկսում նրանց վերաբերյալ նախադատորանստական գրույց:

Ուսուցիչը տրիտոնը ցույց տալով՝ նրա մարմնի կազմութունն ու բիոլոգիան բացատրելիս՝ ուչադրութուն պիտի դարձնի հետևյալ խնդիրների վրա.

Տրիտոնը մարմնի կազմության ընդհանուր ձևով մողեսին (սողունազգի) է նման:

Տրիտոնի մաշկը գորտի մաշկի պես փափուկ, պոչը շերեփուկի պոչի պես տափակ և թաթերը թույլ լինելու բիոլոգիական պատճառները:

Տրիտոնի մարմնի կազմության մասին տրվող բացատրութունն ու ծանոթութունները պիտի կապել նրա միջավայրի (ջուր և խոնավութուն) և կենցաղի հետ:

Տրիտոնի և նրա ձագի մարմինների կազմութունը համեմատելով՝ նրանց տարբերող նշանները գրի առնել տետրում:

Տրիտոնից հետո անցնել սալամանդրին: Կանգ առնել միայն նրա սպեցիֆիկ հատկութունների վրա:

Պրոթեյի սպեցիֆիկ հատկութունները՝ ձեռքի տակ յեղող ոժանդակ միջոցների ոգնությամբ: Նրա աչքերի ուղեխմենտը՝ կապված նրա կենցաղային պայմանների հետ: Ռուզիմենդի մասին ընդհանուր ամփոփ գաղափար:

Ամբողջ դասի ընթացքում տրված գիտելիքների ամփոփումով վերջանում է դասը:

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԿԵՆԴԱՆԻ ԱՆԿՅԱՆ ՅԵՎ ՏԱՆ ՀԱՄԱՐ

1. Դիտել տրիտոնի լողալը և նրա կենցաղային մյուս գործողութունները և գրել տետրում:

2. Տրիտոնը ջրից հանել և դնել սեղանի վրա և դիտել, թե ի՞նչպիսի շարժումներ է կատարում ջրից դուրսն յեղած ժամանակ:

3. Դիտել և պարզել կենդանի անկյունում գտնվող սալա-
մանդրայի և պոչավոր խմբի մեջ մտնող մյուս որդանիզմները
կենցաղային յերևույթները:

4. Կայուն դասադրքից կարգալ համապատասխան գլուխը
(ուսուցչի ցուցմունքով):

ՀԻՆԳԵՐՈՐԳ ԴԱՍ

ԹԵՄԱ. — Անոտանիների խումբը: Յերկակենցաղների ծա-
գումը (հանածոներից նարված ձևերը):

ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿԸ. — Անոտանիների խմբի մասին ընդհանուր
ծանոթություն և յերկակենցաղների ծագումը:

ԴԱՍԻ ՊԱՐԱԳԱՆԵՐԸ:

1. Ալիոհոլի մեջ պահված պրեսպարատներ.
2. Անոտանիների խմբի կենդանիներին վերաբերող նկարներ.
3. Թուղթ ու գրիչ.
4. Կայուն դասադրք:

ԴԱՍԻ ՊԼԱՆԸ:

1. Կապ անցյալ դասերի հետ.
2. Անոտանիների խմբի մասին ընդհանուր ծանոթություն.
3. Հանածոներից ճարված յերկակենցաղների ձևերը.
4. Յերկակենցաղների խմբի ծագումը.
5. Յեզրակազույթյուններից ամենակարևորները դրանցել
տեսքում:
6. Առաջադրություն տան համար:

ԴԱՍԻ ԸՆԹԱՅԻՆ:

1. Դասն սկսվում է յերկակենցաղների խմբի կրկնությամբ
(ի՞նչ կենդանիներ են մտնում այստեղ).
2. Անոտանիների մասին գրի յեն առնվում հետևյալ խնդիր
ները:

Նրանք դենն մի քանի աստիճանոր յերկարություն և նման
են ոճի: Այս որդանիզմները Ասիայի, Աֆրիկայի և Հարավային
Ամերիկայի արևադարձային գոտիներում, մեծամասնությունը
հողի տակին, խոնավ տեղերում են ապրում և մնում են զանա-
զան վորդերով: Նրանց մորթը կազմված է ողակաձև մասերից,
աչքերը ռուդիմենտի յեն յենթարկված, վոր արդյունք է նրանց
ապրելակերպի և միջավայրի: Սրանցից մի քանիսը ծածկված են
փուշերով (ինչպես ձկները):

հարմանում են ձվերով: Մի քանիսի ձագերը ձվից դուրս
դալուց հետո վորոշ ժամանակ լողում են ջրի մեջ, իսկ մի քա-
նիսի ճուտերը ջրի մեջ լողալու բոլորովին կարիք չունեն:

3. Ստեգոսեֆուլների գտնված տեղերը, նրանց հետքերը
մնացորդները, յերկարաբանական վոր չըջանում առաջացած լինե
գիտելիքներ գիպագոտիների և նկարների միջոցով:

4. Ձկների մասին անցնելիս՝ խոսել նաև թոքերով շնչող
ձկների խմբի մասին: Ձկների այս խմբի մի մասից են ծագում
ցամաքում ապրող բոլոր վողնաչարավորների մյուս դասերը:

Ներկայումս թոքերով շնչող ձկները չի կարելի համարել
յերկակենցաղների դասի նախնիքները: Սրանց նախնիքները՝ ի-
րենց լողակներով ծովերի հատակներում շարժվող և այդպիսով
սողալով ափ դուրս յեկած, վոսկրակազմ և թոքերով շնչող
ձկների առանձին մի խումբ է յեղել: Ներկայումս այդ տեսակ-
ները չեն առանջանում: Նրանք վերջացել են, բայց գոցոլեոնդո
լոգիան (հանածո անասունների մասին գիտություն) մեղ ողնում
է նրանց մասին ճիշտ գաղափար կազմելու համար:

Այդ վարդի մի յերկակենցաղների և այժմյան յերկակենցաղ-
ների նախնիքը, մեծ մասամբ, ստեգոսեֆուլներ էլին փոչվում:

Ձրից ցամաք անցնելը ինդիվիդուալների որդանիզմների մեջ
չատ մեծ ու բարդ փոփոխություններ է առաջ բերել (չարժում-
ները, շնչելը, արյան շրջանառությունը և այլն փոխվել են):

Աչակերտները պիտի գան այն յեզրակազույթյան, վոր յեր-
կակենցաղների դասը մտնող կենդանիները ծագել են ձկների դա
սից:

ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՏԱՆ ՀԱՄԱՐ

1. Դասարանում գրածները տանը պատրաստել:
2. Կարգալ դասադրքի համապատասխան գլուխը (ուսուցչի-
չը ցույց է տալիս):

1934-35 ՈՒՍ. ՏԱՐՎԱ. ՅԵՐԿՐՈՐԴ ԳԱՌՈՐԴԻ ՖԻԶԻԿԱՅԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՆՅՈՒԹԻ ՈՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԲԱՇԽՈՒՄԸ ՎՈՉ ԼՐԻՎ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՅԻ ՀԱՄԱՐ

Համաձայն առաջին քառորդում տրված որացուցային բաշխման, վեցերորդ դասարանում պետք էր սկսել «Շարժման հարզոր դումը» թեմայի մշակումից, իսկ յոթերորդ դասարանում՝ «Ելեկ տրտկան եներգիան ջերմայինի փոխվելը» թեմայի մշակումից: Բայց վերոյհետև ուսումնական տարվա սկիզբը փոխադրվեց սեպտեմբերի 15-ն, ուստի յերկրորդ քառորդի նյութի պլանավորման ժամանակ, վերջին յերկու շաբաթվա նյութը տեղափոխվեց յերկրորդ քառորդը:

Աչքի առաջ ունենալով այդ հանդամանքը յերկրորդ քառորդի համար տրվում են հետևյալ թեմաները:

ՎԵՅԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

	Բաղաձ. դպ.	Գյուղակ. դպ.
1. Կարողութունն ու նրա չափումը	8 ժամ.	9 ժամ
2. Հասկացողութուն եներգիայի մասին:		
3. Շարժման հարզորումը	8 »	10 »
4. Փոկն ու հոլանիսը (չկիլ)	4 »	4 »
5. Պտտական շարժում	6 »	6 »
6. Մեխանիկայի կուրսից անցած գիտելիքների ստուգումը	2 »	2 »

Ընդամենը 28 » 31 »

Ծանոթություն՝ Ջերմության դասընթացն ամբողջովին մշակվում է յերկրորդ կիսամյակում:

ՅՈՒՅԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

1. Ոմի որենըը	5 ժամ.	5 ժամ.
2. Ելեկտրական եներգիայի փոխվելը	9 »	9 »

3. Մագնիսականութուն և ելեկտրոն - մագնիսականութուն	9 »	9 »
4. Ելեկտրական եներգիայի՝ մեխանիկականի փոխվելը	6 »	6 »
5. Բառորդում կատարած աշխատանքների հաշվառը	1 »	1 »

Ընդամենը 30 » 32 »

Ծանոթություն՝ «Մեխանիկական եներգիայի՝ ելեկտրականի փոխվելը» թեման և ամբողջ «Լույս» բաժինը մշակվում է յերկրորդ քառորդում:

ՆՅՈՒԹԻ ՈՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԲԱՇԽՈՒՄԸ ՎԵՅԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ Տ ՇԱԲԱԹ

ՄԵՆԱՆԻԿԱ. (Շարունակություն)

ԱՌՍՁԻՆ ՇԱԲԱԹ — Հասկացողութուն կարողության և նրա միավորի մասին՝ ձիու ուժը և վատտ 1 ժամ

2. Կարողության չափումը 1 »

3. Կարողության և աշխատանքի վերաբերյալ խնդիրների լուծումն 1 »

4. Ոգտակար գործողության գործակիցն ու նրա հաշվումը 1 »

ՅԵՐԿՐՈՐԴ ՇԱԲԱԹ. — 1. Ոգտակար գործողության գործակիցի վերաբերյալ խնդիրների լուծումը 1 »

2. Եներգիա: Կինետիկ և պոտենցիալ եներգիա 1 »

3. Տարբեր տեսակի եներգիաներ, մի տեսակ եներգիայի մյուս տեսակի փոխվելը 1 »

4. Եներգիայի պահպանման ու ձևափոխման որենըը և համառոտ հասկացողութուն մշտաշարժ մեքենայի պրոբլեմի մասին 1 »

ՅԵՐԿՐՈՐԴ ՇԱԲԱԹ. — 1. Լծակն ու նրա տեսակները, ուժերի անջությունը և աշխատանքի հասարակցման պայմանը 2 »

2. Լծակների գործածութունը տեխնիկայում և կեցողության մեջ: Ունելիք, միլրատ, լծակային մամուլ և այլն 1 »

3. Խնդիրների լուծումն լծակի բազովիների և ուժերն հաշվելու վերաբերյալ 1 »

ՉՈՐՈՐԴ ՇԱԲԱԹ. — Շարժման հարզորումը պարանի միջոցով, ճախարակներ (անշարժ և շարժական ճախարակ) և նրանց համեմատումը 1 ժամ:

- 2. Պոլիսպրատ և վոլորան 1 ժամ.
- 3. Խնդիրների լուծումն պոլիսպրատների և ճախարակների վերաբերյալ 1 ժամ:

4. Լաբորատոր աշխատանք. —
Լծակների և ճախարակների վրա ուժերի հալասարակչու-
թյան պայմանների ստուգումն 1 ժամ:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԾԱԲԱԹ. — 1. Թեք հարթութուն. ուժերի
առնչությունը և աշխատանքների հալասարուժյունը թեք հար
թության վրա 1 ժամ:

2. Խնդիրների լուծումը թեք հարթության վերաբերյալ
1 ժամ:

3. Փոկային հաղորդում, հոլանդիկ պտույտների թվի և նը-
րանց տրամագծի հակադարձ համեմատականությունը 1 ժ.:

4. Ատամնավոր հաղորդում, անխիլ պտույտների թվի և ա-
տամների թվի հակադարձ համեմատականությունը:

Տարբեր տեսակի հաղորդումների գործադրությունը 1 ժ.:

ՎԵՅԵՐՈՐԴ ԾԱԲԱԹ. — 1. Վարժուժյունների և խնդիրնե-
րի լուծումն փոկային և ատամնային հաղորդումների վերաբեր-
յալ 1 ժամ:

2. Եքսկուրսիա դեպի արտադրություն 2 ժամ:

3. Հասկացողություն պտտական շարժման մասին, պտտա-
կան շարժման արագությունը տեխնիկայում (պտույտների թի-
վը մեկ րոպեյում) 1 ժամ:

ՅՈՒԵՐՈՐԴ ԾԱԲԱԹ. — 1. Հասկացողություն շրջադաշին
շարժման մասին, շրջադաշին շարժման արհաճատումը պտույտ
ների թվի և պտտման շտապիլի միջոցով 1 ժամ:

2. Վարժուժյունների և խնդիրների լուծումն՝ պտտական
շարժման ժամանակ յեղած արագությունը հաշվելու վերաբեր-
յալ 1 ժամ:

3. Իներցիան շրջադարձերի և պտտման ժամանակ. (ցուցա-
դրել փորձեր (դասը կապիում է շարժման առաջին որևէի հետ)
1 ժամ:

4. Կենտրոնախույս ուժ. — կենտրոնախույս մեքենան ու փոր
ձեր նրա հետ 1 ժամ:

ՈՒԹԵՐՈՐԴ ԾԱԲԱԹ. — 1. Մեխանիկայի կուրսի կրկնողու-
թյունն ու վարժուժյունների և խնդիրների լուծումն 3 ժամ:

2. Քառորդում կատարած աշխատանքների հաշվառք 1 ժ.:

ՅՈՒԵՐՈՐԴ ԴԱՍԻՐԱՆ

ԱՌԱՋԻՆ ԾԱԲԱԹ. — 1. Կրկնողություն—հոսանքի ուժը,
հաղորդիչի դիմադրությունը և հոսանքի լարվածությունը 1 ժ.:

2. Ոմի որևէն ամբողջ շղթայի համար և լարվածության
հաշվեն Ոմի որևէի հիման վրա:

3. Խնդիրների լուծումը:

ՅԵՐԿՐՈՐԴ ԾԱԲԱԹ. — 1. Պոտենցիալի անկումը և Ոմի ո-
րևէների գործադրությունը շղթայի մի հատվածի նկատմամբ
1 ժամ:

2. Լաբորատոր աշխատանք. — Հոսանքի ուժի, դիմադրու-
թյան և լարվածության հաշվելը շղթայի մասերում 1 ժ.:

3. Ելեքտրական հոսանքի կարողությունը, կարողության մի
ափորը՝ վատտ, հեկտովատտ, կիլովատտ և նրանց հաշվելը
1 ժամ:

4. Ելեքտրական հոսանքի կարողությունը. աշխատանքի
միավորը՝ ջաալ, հեկտովատտ-ժամ, կիլովատտ-ժամ և նրանց
հաշվելը 1 ժամ:

ՅԵՐՐՈՐԴ ԾԱԲԱԹ. — 1. Հոսանքի ջերմային ազդեցությու-
նը (փորձեր) 1 ժամ:

2. Չաալ — Լենցի որևէնը 1 ժամ:

3. Տարբեր ախիլ վարժուժյունների և խնդիրների լուծու-
մը հոսանքի անջատած ջերմության քանակը հաշվելու վերաբեր
յալ (տես՝ Ֆայելի — Ֆիդիկայի դասագիրքը) 2 ժամ:

ՉՈՐՐՈՐԴ ԾԱԲԱԹ. — 1. Ելեքտրողուում և ջերմացուցիչ
գործիքներ 1 ժամ:

2. Լաբորատոր աշխատանք՝ Ելեքտրական յեռացուցիչի ող-
տակար գործողության գործակցի փորձերը 1 ժամ:

3. Շիկացման լամպը և վոլտյան աղեղն ու նրանց գործողու-
թյունը 1 ժամ:

4. Բնական և արհեստական մագնիսոններ: Արհեստական մագ-
նիսների տարբեր տեսակները: Մագնիսային բևեռներն ու նրանց
փոխազդեցությունը: Կողմնացուցյն ու նրա նշանակությունը
1 ժամ:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԾԱԲԱԹ. — 1. Մագնիսի կառուցվածքը 1 ժ.:

2. Մագնիսական դաշտ. մագնիսական սպեկտրը միևնույն և
տարբեր բևեռների միջև. ուժազիծն ու նրա ուղղությունը 1 ժ.:

3. Յերկրազնդի մագնիսական դաշտը 1 ժամ:

4. Հոսանքի մագնիսական դաշտի ազդեցությունը, առնչու-
թյունը և հոսանքի ուղղությունը և ուժազիծի միջև (պտուտակի
որևէնը)

- ՎԵՅԵՐՈՐԴ ՇԱՐԱԹ.** — 1. Հասկացողութիւնն մազնխասկանյութական ելեքտրական բնույթի մասին 1 ժամ:
2. Ելեքտրոմագնիս. ելեքտրական դանդակ 1 ժամ:
3. Մորզէի հեռագրային սպարատը, կայանների սքեման (հաղորդման և բնույնիչի) 1 ժամ:
4. Հեռախոս և միկրոֆոն 1 ժամ:
- ՅՈԹԵՐՈՐԴ ՇԱՐԱԹ.** — 1. Մազնխասկանութիւն և ելեքտրոն — մազնխասկանութիւն (կրկնողութիւն) 1 ժամ:
2. Հոսանքով հաղորդիչի շարժումը մազնխասկան դաշտում. հոսանք շրջանակը 1 ժամ:
3. Չախ ձեռքի կանոնը: Ելեքտրոմոտորի կառուցվածքը և նրա սքեման 2 ժամ:
- ՈՒԹԵՐՈՐԴ ՇԱՐԱԹ.** — 1. Լարարատոր աշխատանքի փոքրիկ մոտոր հավաքելը և նրա աշխատանքը փորձելը 1 ժամ:
2. Ելեքտրոմոտորների գործադրութիւնը 1 ժամ:
3. Առաջին քառորդում անցած նյութի կրկնողութիւնը 1 ժամ:
4. Բառորդում կատարած աշխատանքների հաշվառը 1 ժ.:

Ք Ի Մ Ի Ա.

ՔԻՄԻԱՅԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ԿՅՈՒԹԻ ՈՐԱՅՈՒՅԱՅԻՆ ԲԱԺԱՆՈՒՄԸ 1934—35 ՈՒՍ. ՏԱՐԻՆ

ՅՈԹԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Յերկուրդ փառոզ

Շարաթը 2 ժամ. բնդամենը 7,5 շաբաթ — 15 քառ. ժամեր, վորոնցից 2 ժամ հաշվառում և 13 ժամ նյութի մշակման և ամբողջման համար:

ԱՌԱՋԻՆ ՇԱՐԱԹ. — Թեմա — «Ոքսիդացում և վերականգնում» — շարունակութիւն (ակիդը տես 1-ին քառորդի նյութը): Վերականգնման ռեակցիան: Վերականգնումը վորպես ռքսիդացման հակառակ ռեակցիա: Վերականգնման դանաղան յերե վույթներ — ջրածնով, ածխով, ածխածնի ռքսիդով տաքացնելը: Հասկացողութիւնն ռքսիդացնող վերականգնման պրոցեսի մասին: Վերականգնման ռեակցիայի կիրառումը մետաղագործութեան մեջ (2 ժամ):

ՅԵՐԿՐՈՐԴ ՇԱՐԱԹ. — Պարզ նյութերի կլասիֆիկացիան, մետաղներ և մետաղոյիղներ: Թեմա. «Ոքսիդներ, հիմքեր, թթուներ և աղեր»:

Ոքսիդների առաջանալը: Մետաղների ռքսիդների հիդրատացումը և հիմքեր առաջանալը (հիդրոօքսիդների):

Լարարատոր աշխատանք. — Կիրը հանդցնելը (դիտել հաղեցած կրի, կծու նատրոնի կամ կծու կալցումի լուծվելը ջրի մեջ) (2 ժամ):

ՅԵՐՐՈՐԴ ՇԱՐԱԹ. — Մետաղոյիղների ռքսիդների հիդրատացումը և թթուների առաջանալը: Թթվածնափոր թթուներ առաջանալը: Թթվածնափոր թթուներ (ծծմբական, ծծմբային, ածխային, ֆոսֆորային) և թթվածնագուրկ թթուներ (աղաթթու, ծծմբաջրածնաթթու): Թթուների անհիդրիտներ: Դուրս բերել անհիդրիտների ֆորմուլան թթվի ֆորմուլայից:

Լաբարատոր աշխատանքներ և դեմոնստրացիաներ .

ա) Ծծմբային գազի միացումները ջրի հետ .

բ) Ծոսֆորաթթվի անհիդրոլիզի հիդրատացիան .

գ) Ծանոթութուն թթուների . փորձել խիստ նոսրացած թթուների համը և նրանց ներգործությունը լակմանի վրա (2 ժամ) :

ՉՈՐՐՈՐԴ ՇԱԲԱԹ . — Աղեր . — Աղերի առաջացման օճակ-ցիաներ . թթու և մետաղ , թթու և մետաղօքսիդ , թթու և մետաղ — հիդրօքսիդ :

Լաբարատոր աշխատանքներ և դեմոնստրացիաներ :

1. Մետաղների (ցինկ , յերկաթ , մազնեղիում) ներգործու-թյունը թթուների վրա : Լուծույթներից դատել (զուլորչացման միջոցով) ստացած աղերից մեկը :

2. Թթուների ներգործությունը մետաղօքսիդների վրա (պը Դինձի օքսիդ , ցինկի օքսիդ) :

3. Պղինձ-հիդրօքսիդի լուծույթը թթվի մեջ (2 ժամ) :

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՇԱԲԱԹ . — Սկզբնական հասկացողություն մե-տաղների արժեքականություն մասին : Գիտենալ կարևորագույն տարրերի արժեքականությունը : Չեղօք և թթու աղեր : Թթվա-յին մնացորդների արժեքականությունը : Կրկնել անցած նյութը (2 ժամ) :

ՎԵՅԵՐՈՐԴ ՇԱԲԱԹ . — Աղերի , օքսիդների և մետաղհիդ-րօքսիդների ֆորմուլաներ կարգերու վարժություններ : Սկզբնա-կան օճակություններ ձեռք բերել մի և յերկհիմն թթուների ա-ղերի առաջացման օճակցիաների հալատարումներ կազմելու մեջ (2 ժամ) :

ՅՈՒԹԵՐՈՐԴ ՇԱԲԱԹ . — Սկզբնական հասկացողություն թը-թուների , օքսիդների , հիմքերի և աղերի կլասիֆիկացիայի ու նոմենկլատուրայի մասին (1 ժամ) :

Աչակերտների գիտելիքների հաշվառում (1 ժամ) :

ՈՒԹԵՐՈՐԴ ՇԱԲԱԹ . — Հաշվառում (1 ժամ) :

ՈՒԹԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Յերեռոդ Բառոդ

Շաբաթը 3 ժամ , ընդամենը 7,5 շաբաթ , — 22 քառ . ժամ , փորձեցից 1 ժամ հաշվառում և 21 ժամ նյութի մշակման և ամ-բասպնդման համար :

ԱՌԱՋԻՆ ՇԱԲԱԹ . — Թեմա «Ածխածին և սիլիցիում» , շարու-նակություն (սկիզբը տես 1-ին քառորդի նյութը) : զենեքատորա

յին և ջրային դազ : Ածխաթթու դազ : Նրա ֆիզիկական և քիմիա-կան հատկությունները : Ածխաթթու գազի առաջանալը բնու-թյան մեջ և նրա կլանումը բույսերի կողմից : Ածխաթթու գազի կիրառումը : Ածխաթթու և նրա աղերը : Աղերի հիդրոլիզը և ա-ղերի լուծույթների ներգործությունն ինդիկատորների վրա : Ածխաթթվի կալցիումական աղ և նրա բնական դանազանակեր-պությունը : Ջրի կոչությունը և նրա վերացման յեղանակնե-րը :

Լաբարատոր աշխատանքներ և դեմոնստրացիաներ :

1. Ջրային գազ ստանալը :

2. Թթվի ներգործությունը կարբոնատների վրա և ածխա-թթու գազ ստանալը : Ածխաթթու գազն անոթից-անոթ լցնելը : Բենզինի «հրդեհը» հանգցնելը :

3. Փորձել դանազան աղերի լուծույթները լակմուսով :

4. Մալումարի քաղքայումը սաքացման միջոցով (2 ժամ) :

ՅԵՐԿՐՈՐԴ ՇԱԲԱԹ . — Սոդա և պատաշ : Նրանց նշանակու-թյունը իՍՀՄ-ի Ժողովրդական տնտեսությունում մեջ : Սոդայի ար-տադրությունը քիմիաբան պրոցեսը Սոլվեյի յեղանակով : Մեթան և նրա առաջանալը բնության մեջ : Ճաճհային և հանքային գազ : Հանքային լապտեր :

Դեմոնստրացիա :

1. Մեթան ստանալը և ողի ու մեթանի խառնուրդի պայթու-ցիկ լինելը (3 ժամ) :

ՅԵՐՐՈՐԴ ՇԱԲԱԹ . — Հատկացողություն ածխածխածինների բարձրարժանություն մասին (առանձին կատակցիաճաքից ֆորմուլանե-րի) և նրանց նշանակությունը արդյունաբերությունում մեջ : Հա-մատ տեղեկություններ վառելանյութի մշակման մասին : Յաճ-բորակ քարածխի տեսակների գաղիֆիկացիան , փոշխանման վա-ռելանյութ , նավթի թորումը և վերամշակումը : Գազանման վա-ռելանյութեր : Վերամշակված վառելանյութի նշանակությունը իՍՀՄ-ի ինդուստրացման համար (3 ժամ) :

ՉՈՐՐՈՐԴ ՇԱԲԱԹ . — Անցած նյութի կրկնողություն և ամբա-պնդում : Սիլիցիում և նրա տարածումը բնության մեջ : Սիլիցիու-մի դերը յերկրագնդի կեղևի մեջ : Սիլիցիումի հատկությունը : Սիլիցիումի օքսիդ (կվարց և նրա տեսակները) Սիլիցիումի թը-թուները և նրանց աղերը (սիլիկատներ) : Հեղուկ ապակի և նրա կիրառումը :

Դեմոնստրացիա .

1. Սիլիկահողի և սիլիկատների դանազան տեսակների կո-լեկցիան :

2. Հեղուկ ասպակու քայքայումը և սիլիկաթթվի դոնգոդը բա-
տանալը (3 ժամ) :

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՇԱՐԱԹ. — Հասկացողությունն պոլիսիլիցիտումա-
կան թթուների մասին: Բնական սիլիկատները, վորպես պոլիսիլի-
ցիտումական թթուների աղեր: Սիլիկատները, վորպես շինարարա-
կան նյութերի աղբյուր: Գլխավոր բնական սիլիկատներ: Սիլի-
կատային արդյունաբերություն: Հասկացողությունն ասպակու
կերամիտային կերամիկայի և ցեմենտի արտադրության մա-
սին:

Դեմոնստրացիա:

1. Կապարոքսիդի, սիլիկահոդի և սոդայի խառնուրդի հա-
լելը չորացրած կավի ձողի վրա (ասպակյա դլազուրի առաջա-
նալը):

ՎԵՑԵՐՈՐԴ ՇԱՐԱԹ. — Թեմա. «Տարրերի պարբերական սխե-
տեմը և հասկացողությունն նյութի կառուցվածքի մասին»: Տար-
րերի կլասիֆիկացիան: Մետաղներ և մետալոիդներ: Մի քանի
մետալոիդների մետաղական և մի քանի մետաղների մետալոիդա-
կան հատկութիւնները: Պարբերականության հայտնաբերումը ստոր-
րերի հատկութիւնների փոփոխման նկատմամբ ատոմային զի-
փոխման հնտեանը (3 ժամ):

ՅՈԹԵՐՈՐԴ ՇԱՐԱԹ. — Դ. Ի. Մենդելեևի որոնքը (մինչև
չրջանների համառոտ բնութագրերը) — (3 ժամ):

ՈՒԹԵՐՈՐԴ ՇԱՐԱԹ. — Հալվածում աչակերտների դիտելիք-
ներ (1 ժամ):

ՔԻՄԻԱՅԻ ՅԵՐԿԺԱՄՅԱ ԴԱՍԻ ԿՈՆՍՊԵԿՏԸ ՅՈԹԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

ԴԱՍԻ ԹԵՄԱՆ. «ԹՔուներ»

ԴԱՍԻ ՆՊԱՏԱԿԸ. — Յուրջ տալ աչակերտներին դեմոնստրա-
ցիայի, լաբորատոր աչխատանքի միջոցով և դրել միլենոլյն ժա-
մանակ մետալոիդների ուղիղացման հիդրադացումը հավասա-
րություններով, թթուներ ստանալը: Մանթացներ տարբեր
թթուների բնորոշ հատկութիւնների հետ:

ԴԱՍԻ ՊԼԱՆԸ. — Անհիդրիտների հիդրադացումը և թթու-
ներ ստանալը:

2. Թթուների բնորոշ հատկութիւնները:

3. Թթուների անհիդրիտները և նրանց ֆորմուլան թթուներ-
ի ֆորմուլայից ստացումը:


ԴԱՍԻ ԸՆԹԱՅՔԸ. — Դասը կազմակերպվում է զրույցի, դե-
մոնստրացիայի, լաբորատոր աչխատանքների և վարժութիւնների
միջոցով, վորոնց ընթացքում աչակերտներն ստանում են հա-
մապատասխան հասկացողութիւն և փորձառութիւն տվյալ
թեմայի մասին:

1. Դասն սկսվում է ծծմբային դաղը ջրի հետ միացնելու
դեմոնստրացիայից: Դասատուն (ախտեղ, վորտեղ չկա լաբոր-
րանտ) ածում է բանկայի մեջ մի քիչ ջուր, յերկաթյա դղալի
մեջ (վորն ամբարցրած է լարին և անցնում է խցանի միջով,
վորով ծածկված է բանկան) վառում է մի փոքրիկ կտոր ծը-
ծումբ, մտցնում բանկայի մեջ, ախպես վոր բանկան ծածկելու
ժամանակ դղալը հասնի մոտավորապես մինչև կեսը և ծածկում
խցանով: Յերը ծծմբի աչրումը դադարում է, հանում է դղալը և
բանկան ծածկում ձեռքով: Ջուրը լավ խնոցելուց հետո ածում է
կապույտ լակմուսի լուծույթ, վորով վորոշում է ստացված ծը-
ծմբային թթվի լուծույթը:

¹⁾ Տես 2-րդ քառորդի ծրագրային նյութերի որացուցային
բաժանման յերրորդ շաբաթը 1934—35 ուս. տ.


Ծանոթութիւն՝ Դասատուն զեմոնտարացիայից հետո (ռեակցիան լակմուսի վրա) ծծմբային թթվի լուծուցիլը չի թափում, փորովհետև այստեղ հարկաւոր է քայքայել, փոր ծծմբային թթուն վերականգնման հատկութիւն ունի և քայքայում է նյութերի գույները:

Դրանից հետո գրում է զբաւարտակի վրա ռեակցիայի հափասարութիւնը, փորը տեղի յե ունեցել ծծմբային գազի և ջրի մեջ:





2. Դասի մյուս բաժնում դասատուն ցույց է տալիս ֆոսֆորական անհիդրիտի հիդրատացումը: Դրա համար փորձանոթի մեջ վերցնում է մի քիչ ֆոսֆորական անհիդրիտի սպիտակ փոշի. փորձանոթի մեջ ածում է ջուր, սկզբում կաթիլներով (ուշագրութիւն և դարձնում փորձանոթի ուժեղ տաքացման) հետո ածում է ջուրը հիդրատացումը հասցնում մինչև ֆոսֆորական անհիդրիտի բոլորովին լուծվելը: Ստացված ֆոսֆորական թթվի լուծուցիլի մեջ ածում է կապույտ լակմուսի լուծուցիլ:

Ինչպիսի գույնով է ներկվում լակմուսը նրանից հետո գրում է զբաւարտակի վրա ռեակցիայի հափասարութիւնը, փոր տեղի յե ունեցել ֆոսֆորական անհիդրիտի և ջրի մեջ:




3. Իլլյուտարացիայից և զեմոնտարացիայից հետո դասատուն կազմակերպում է զրույց կանչելով զբաւարտակի մոտ աշակերտներին և գրել տալիս մետալոյդների ոքսիդների միացութիւնը ջրի հետ, հիմնովելով իրենց հայտնի որինակների վրա՝ «թթվածին, ոքսիդացում և վերականգնում» թեմայից:




Չրույցի ժամանակ դասատուն աշակերտների ուշադրութիւնը դարձնում է այն հանդամանքի վրա, փոր թթունները ստացվում են, փոչ միայն անհիդրիտների միացութիւնից ջրի հետ և փոր դա միակ միջոցը չէ, այլ և ստացվում են ուրիշ ռեակցիաների միջոցով, փորոնց հետ կծանոթանանք հետո: Այստեղ վերջանում է յերկժամյա դասի առաջին մասը:

3. Ծանոթացնելով աշակերտներին թթունների ռեակցիաների հափասարութիւնը հետ, տալիս է միևնույն ժամանակ վարժու-

թիւններ համապատասխան թթունների ֆորմուլայից անհիդրիտի ֆորմուլա ստանալ: Որինակ.



Անհրաժեշտ է հիշեցնել աշակերտներին, փոր յեթե թթունների մեջ ջրածինը մի ատոմ է, թթունների ֆորմուլայից անհիդրիտների ֆորմուլա ստանալու դեպքում, հարկաւոր է վերցնել յերկու մոլեկուլ թթու: Որինակ.



4. Դասի մյուս մասում դասատուն տալիս է տեղեկութիւն, փոր բոլոր մետալոյդների ոքսիդների հիդրատները պատկանում են թթունների իոքսին: Բայց կան նաև թթուններ, փորոնք իրենց մեջ թթվածին չեն պարունակում — կոչվում են քքվածնագուրի թթուններ: Որինակ. ազոթթու, ծծմբական թթու և այլն: Անցնում է լաբարատոր աշխատանքին — փորձել ուժեղ թթունների լուծուցիլների համը և ազդեցութիւնը լակմուսի վրա: Դրա համար դասատուն (այնտեղ, փորտեղ չկա լաբարատոր) բաժանում է աշակերտներին փորձանոթներ, փորոնց մեջ դրված են տարբեր թթունների լուծուցիլներ: Աշակերտներն ապակյա ձողիկով վերցնում են այդ թթուններից մի մի կաթիլ փորձանոթների մեջ, առթի մեջ, մինչև կեսը ջուր են ածում, շարժում և փորձում համը կամ բաց թողնում լակմուսը (թուղթը կամ լուծուցիլը):

Ինչպե՞ս կարելի յե լակմուսի թղթի միջոցով յերևան բերել թթուններ:

5. Դասի հետևյալ մոմենտը — դասատուի զրույցն է աշակերտների հետ. թթունների մասին (աշակերտների յուրացրած որինակների վրա) դասը վերջանում է դասատուի համառոտ ամփոփումով:

ՏՆԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ. — Գրել տետրի մեջ.

1. Անցած նյութից հայտնի ռեակցիայի հափասարութիւնները: Մետալոյդների ոքսիդների հիդրատացումը:

2. Թթունների ֆորմուլայից անհիդրիտի ֆորմուլա ստանալը:

ԴԱՍԻ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄԸ. — 1. Սպիրտային լամպ, բանկա 300-350 խորանարդ սանտիմետր խցանով, յերկաթե գդալ լարով, փորձանոթներ, սիպետականեր կամ ապակյա ձողեր և թաս:

2. Ֆոսֆորական անհիդրիտ, լակմուսի լուծուցիլ կամ թուղթ. թթուններ. ծծմբաթթու, ազոթթու և քայքայաթթու:

**1934-35 ՈՒՍ, ՏԱՐՎԱ 2-րդ ԳԱՌՈՐԴԻ
ԾՐԱԳՐԱՅԻՆ ՆՅՈՒԹԻ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ
ՇԱԲԱԹՆԵՐԻ**

ԱՇԽԱՏԱՆՔ

ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆ

7 1/2 ՇԱԲԱԹ — 8 ԺԱՄ — ՇԱԲԱԹԸ 1 ԺԱՄ.

ԱՌԱՋԻՆ ՇԱԲԱԹ. — «Առաջին աշխատանքները թղթով» թե մայի շարունակությունը: Պտտան պատրաստելը: Թերթ պատրաստելը, ուղղանկյուն քառանկյունուց՝ քառակուսի ստանալու յեղանակը: Քառակուսու կենտրոնը գտնելն անկյունագծերի միջոցով: Քուլթ կտրելն անկյունագծերով, կանգնելով կենտրոնից (անկյունագծերի հատման կետը) 2 սմ. հեռավորության վրա: Պտտանի թեքը ծալելն ու գնդասեղ հազցնելը:

ՅԵՐԿՐՈՐԴ ՇԱԲԱԹ. — Ծրար պատրաստելը: Ուղղանկյուն քառանկյունաձև թղթերի պատրաստելը: Ուղղանկյունուց շեղանկյուն և շեղանկյունուց ուղղանկյուն ծրար պատրաստելը:

Անկյունները կտրելը և ծրարի սոսնձելը:

ՅԵՐՐՈՐԴ ՇԱԲԱԹ. — Տետր պատրաստելը: 2-4 ուղղանկյուն հավասար թերթեր պատրաստելը: Վերադրումն իրար վրա, ըստ յերկարության ծալելը և կարելը տետրի ծալվածքով:

ՉՈՐՐՈՐԴ ՇԱԲԱԹ. — Թղթերի կոլեկցիա կազմելը: Բոլոր ծանոթ թղթերի տեսակներից կտրել 5-5 սմ. կամ 5-10 սմ. թերթ և տետրի 2 թերթի վրա շարքով փակցնել:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՇԱԲԱԹ. — Ալբոմ պատրաստելու յեղանակը նույնն է, ինչ վոր տետրինը, տարբերությունը ձևի մեջ է:

ՎԵՅԵՐՈՐԴ ՇԱԲԱԹ. — «Կար և հյուսվածք»: Ծանոթություն գործվածքին: Թելի կառուցվածքը: Ասեղ թեքելը և հանգույց կապելը: Գործվածքը կտրելն ըստ ուղիղ թելի (քսակ պատրաստելը):

ՅՈՒԹԵՐՈՐԴ ՇԱԲԱԹ. — Կարելը կարանով «առաջ» և «հետ»: Քսակի կարելը:

ՈՒԹԵՐՈՐԴ ՇԱԲԱԹ. — Յերկրորդ քառորդի աշխատանքների հաշվառվելը և առաջին կիսամյակի աշխատանքների հանրագումարը:

ՅԵՐԿՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

7 1/2 ՇԱԲԱԹ — 8 ԺԱՄ — ՇԱԲԱԹԸ 1 ԺԱՄ

ԱՌԱՋԻՆ ՇԱԲԱԹ. — Ինչպե՞ս է կազմվում գերքը: Տետրերով կարելը (կամ «տպագրական թերթ»): Սղոցումը: Ֆորզպաց պատրաստելը:

ՅԵՐԿՐՈՐԴ ՇԱԲԱԹ. — Գրքի կարելը: Թուղ կտրելը: Թուղի ծայրերը քրքրելը, քրքրած մասերը ֆորզպացին փակցնելը և դեղքի մեջքը սոսնձելը:

ՅԵՐՐՈՐԴ ՇԱԲԱԹ. — Գրքի յեղրերի կտրելը, կազմեր պատրաստելը և անկյունների սոսնձումը:

ՉՈՐՐՈՐԴ ՇԱԲԱԹ. — Կազմերի սոսնձումը և կազմին փակցնելը:

Գրքի շապկի և ֆորզպացի փակցնելը:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՇԱԲԱԹ. — Գրադարանի գրքերը նորոգելը և գրադարանի համար բրոշյուրներ կազմելը:

ՎԵՅԵՐՈՐԴ ՇԱԲԱԹ. — «Կար»: Հաղուստն ու նրա համար գործածվող կտորները: Գործվածքի հատկությունը: Տարբեր գործվածքներ և թեքեր: Հաղուստ պատրաստելու հիմնական պլանները:

ՅՈՒԹԵՐՈՐԴ ՇԱԲԱԹ. — Թաշկինակ ձևելը և կարելը (ավարտել տանը):

ՈՒԹԵՐՈՐԴ ՇԱԲԱԹ. — Յերկրորդ քառորդի աշխատանքների հաշվառումը և առաջին կիսամյակի աշխատանքների հանրագումարը:

ՅԵՐՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

7 1/2 ՇԱԲԱԹ — 4 ԺԱՄ — 2 ՇԱԲԱԹԸ 1 ԺԱՄ

ՅԵՐԿՐՈՐԴ ՇԱԲԱԹ. — Եքսկուրսիա դեպի տպարան (այնտեղ, վորտեղ աշխատին կա), վորտեղ յերեխաներին պետք է ցույց տալ, նրանց հասկացողությանը մատչելի, գրադարության, տպագրության, բրոշյուրովկայի և գրքեր կազմելու մոմենտները: Վորտեղ տպարան չկա, եքսկուրսիա գնալ կազմարանական արհեստանոց: Այդ էլ չլինելու դեպքում պետք է առաջին քառորդում պատրաստած տառերի ողնությամբ տպագրել լրողունքներ (յեթե միայն հնարավոր է):

ՉՈՐՐՈՐԴ ԾԱԲԱԹ. — Ինչպե՞ս է կազմվում գիրքը (գրքի չափերը հանելը, Փորձաց պատրաստելը, կարելը, կազմերը պատրաստելը):

ՎՆՅԵՐՈՐԴ ԾԱԲԱԹ. — Գրքերի յեզրերը կտրելը: Կաղմը, չափերը և Փորձացը փակցնելը:

ՈՒԹԵՐՈՐԴ ԾԱԲԱԹ. — Յերկրորդ քառորդի աշխատանքների հաշվառումը և առաջին կիսամյակի աշխատանքների հանրագումարը:

ՉՈՐՐՈՐԴ ԳԱՍԱՐԱՆ

7¹/₂ ԾԱԲԱԹ — 4 ԺԱՄ — 2 ԾԱԲԱԹԸ 1 ԺԱՄ

ՅԵՐԿՐՈՐԴ ԾԱԲԱԹ. — «Ջրային և ողբային շարժիչներ»: Թափվող ջրի աշխատանքը: Ջրային շարժիչներ: Ամբարտակի դերը: Վերևից հոսող ջրով անիվ պատրաստելը:

ՉՈՐՐՈՐԴ ԾԱԲԱԹ. — Տակից գնացող ջրով անիվ պատրաստելը:

ՎՆՅԵՐՈՐԴ ԾԱԲԱԹ. — Ելեմենտար հասկացողութունը ջրային տուրբինային և ելեքտրականի կառուցվածքի ու աշխատանքի մասին կամ եքսկուրսիա դեպի մեքենադաս և ջրաղաց կամ դեպի ջրային շարժիչ:

ՈՒԹԵՐՈՐԴ ԾԱԲԱԹ. — Յերկրորդ քառորդի աշխատանքների հաշվառումը և առաջին կիսամյակի աշխատանքների հանրագումարը:

Ծանոթություն. — Աշխատանքի բոլոր այն տեսակները, վորոնց կատարելը մեկ ժամվա ընթացքում մեկ աշակերտի ուժերից վեր կլինի, մենք ներստի յենք ունեցել աղբյուրի աշխատանքները կատարել կորեկտիվորեն:

Առաջին կիսամյակի վերջում անհրաժեշտ է, առաջին քառորդի ցուցմունքների համաձայն, դպրոցական ցուցահանդես կազմակերպել:

Մեկ շաբաթ — աշխատանք, իսկ մյուսը՝ նկարչութուն (հերթախմբորեն):

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳԱՍԱՐԱՆ

7¹/₂ ԾԱԲԱԹ — 23 ԺԱՄ, ԾԱԲԱԹԸ 3 ԺԱՄ

ՓՆՅՏԻ ՄՇԱԿՈՒՄԸ

ԱՌԱՋԻՆ ԾԱԲԱԹ. — Ներածական զրույց բնափայտի և նրա նշանակութան մասին՝ ժողովրդական տնտեսութան մեջ:

Մեր արհեստանոցը, դադգյահը, վորպես բանվորական տեղ: Ներքին կարգապահութան կանոններ:

Նյութերի տեխնոլոգիան. բնափայտը վորպես շինարարական և դործածական նյութ: Բնափայտի հիմնական հատկութունը. արագ և հեշտ մշակումը: Բնափայտի բացատրական հատկութունները: Հասկացողութուն սղոցած նյութերի մասին. տախտակ, 2 հաստ հաստ տախտակ, բարակ տախտակ:

Ունակություններ. — տվյալ տեղում հանդիպող բնափայտի տեսակները տարբերելը (լորենի, կաղնի, յեղենի, կեչի, թեղի, չամի) 3 ժամ:

ՅԵՐԿՐՈՐԴ ԾԱԲԱԹ. — Նշումը. հասկացողութունը նշան մասին: Անկյունադղի, ունիվերսալ, կարկինի կազմութունը: Նյութանցով ուղղվելու կանոնները:

Ունակություններ. — Կատարելի հասարակ նշումներ: Յերկարությամբ սղոցելը:

Պրակտիկ աշխատանք. — Տունկերի համար արկղ պատրաստելը 3 ժամ:

ՅԵՐՐՈՐԴ ԾԱԲԱԹ. — Սղոցումը: Յերկարությամբ և լայնությամբ սղոցելը: Աղեղնասղոցի կառուցվածքը (լուչկավաթ պիլա): Ատամների միջև յեղած հեռավորութունների, ատամների մեծության և նրանց թեքության աղեղնությունը սղոցման արագության, աշխատանքի մարքության և ուժերի ծախսման վրա:

Ունակություններ. — Մշակվող նյութը կարողանալ ճիշտ ամրացնել դադգյահի վրա: Ըստ սղոցման բնույթի կարողանալ ընտրել սղոցը: Կարողանալ սղոցը հարկավոր անկյան տակ լարել: Կարողանալ սղոցն ուղիղ բռնել, շարժումներ կատարել և բանվորական դիրքը րնդունել: Կարողանալ յերկարությամբ սղոցել:

Պրակտիկ աշխատանք. — Հովհարի թեկեր պատրաստելը:

ՉՈՐՐՈՐԴ ԾԱԲԱԹ. — Սղոցել կանոնավոր սղոցելը (սուր, լարված), աշխատողի աշխատանքային դիրքը. դործիքը բռնելու և շարժումների աղեղնությունն աշխատանքի վորակի և արտադրողականության վրա: Բանվորական տեղ կազմակերպելու կանոնները՝ սղոցելու ժամանակ: Անխտանցության և նախադրույց ման միջոցները:

Ունակություններ. — Ընդլայնական սղոցումը:

Պրակտիկ աշխատանք. — Մատերիալ պատրաստելը շրջանակների, փայտացանցերի համար. տեսակավորելը 3 ժամ:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԾԱԲԱԹ. — Ռանդելը: Ռանդայի կառուցվածքը: Կիսաֆուգանի կառուցվածքի առանձնահատկութունները:

Ռանդոզ գործիքների գործադրութեան հաջողականութիւնը: Բանվորական դիրքը, բունելը, շարժումները, սեղմելը, ուժ գործադրելը և շարժումների արագութիւնը պրոցեսի ժամանակ: Նախագգուչացուցիչ և անվտանգութեան միջոցները:

Ունակութիւններ. — Կազմակերպել բանվորական տեղը: Մշակելով նյութն ամրացնել դաղդյաճում, կարգել բերել ունդան և շերտերը:

Ռանդան ճիշտ պահել, շարժումներ կատարել: Կարողանալ ունդել: Քանոնով ստուգել:

Պրակտիկ աշխատանք. — Հովհարի թևի համար պատրաստած նյութը ունդել 3 ժամ:

ՎԵՅԵՐՈՐԴ ՇԱՖԱԹ. — 3-րդ, 4-րդ և 5-րդ շար. ունակութիւնները կրկնել և ամրացնել:

Պրակտիկ աշխատանք. — Ճաղերի (րեչյոտկա) շրջանակի համար պատրաստած մատերիայը ունդել, տեսակաւորել 3 ժ.:

ՅՈԹԵՐՈՐԴ ՇԱՖԱԹ. — Նույն ունակութիւններն են, ինչ վոր 3-րդ, 4-րդ և 5-րդ շար. կրկնել և ամրացնել:

Ունակութիւններ. — Բթակի (շիպ) սղոցելը և անցք փորել-Պրակտիկ աշխատանք. — Ճաղերի շրջանակներ համարելն ու ստանձնելը, տեսակաւորում 3 ժամ:

ՈՒԹԵՐՈՐԴ ՇԱՖԱԹ. — Յերկրորդ քառորդի անելիքների հաշվառքը և առաջին կիսամյակի աշխատանքների հանրագումար 2 ժամ:

ՎԵՅԵՐՈՐԴ ԴԱՍՐԱՆ ՓԱՅՏԻ ՄՇԱԿՈՒՄ

ԱՌԱՋԻՆ ՇԱՖԱԹ. — Եփուրսիս դեպի ՄՏԿ նորոգող արհեստանոցները:

Փայտամշակման ցեղը դիտելը: Փայտամշակման մեխանիկական դաղդյաճները — սղոցող, ունդող և ծակող դաղդյաճներ: Արտադրողականութիւնը: Մեխանիկական դաղդյաճների եներգի ալի աղբյուրները: Աշխատանքը կազմակերպելը ցելիտամ: Պլան, առաջադրութիւն, ներքին կանոնադրութիւն, աշխատողների ֆունկցիաները, հաշվառք, սոցմրցութիւն 3 ժամ:

ՅԵՐԿՐՈՐԴ ՇԱՖԱԹ. — Նյութերի տեխնոլոգիան. բնափայտի մեխանիկական հատկութիւնները, չորացնելու կանոնները: Ծանոթութիւն արհեստական չորացման հետ: Սոսինձն ու նրա պատրաստելն աշխատանքի համար: Ներկեր — սոսինձային, յուղային, սկիպիդարային և ինչպէս և նրանց պատրաստելը: Փայտե իրերն ալը ներկերով ծածկելու միջոցները:

Պրակտիկ աշխատանք. — Նյութերը պատրաստելը (սղոցել,

ունդել) (մարգերի համար) շարքացանի (ձեռքով) 3 ժամ:

ՅԵՐԿՐՈՐԴ ՇԱՖԱԹ. — Փայտահատումը քեքև կացնով. կացնով աշխատելու կանոնները: Անվտանգութեան տեխնիկան:

Ունակութիւններ. — Տիրապետել կացնին: Յցեր տալիս ու սրելը, փայտ կտրտելը:

Պրակտիկ աշխատանք. — Մարկեր պատրաստելը 3 ժամ:

ՉՈՐՐՈՐԴ ՇԱՖԱԹ. — Սղոցում. — Սղոցման 5-րդ տարվա ունակութիւններն ամրացնելը: Քանոնիստ բթակների և ունկերի սղոցելը: Սղոցելը փոչ բարդ և կոը գծերով:

Ռանդում. — Ուսուցման 5-րդ տարվա ունակութիւններն ամրացնելը: Ակոսային և ազուլցի ունդելը:

Ծակիչ հաստաց. — Ծակիչ հաստոցի կառուցվածքի դիտաւոր մասերը (իլիկ, փամփուշտ, շարժող և ազատ փոկաւոր սեղմիներ): Ծակիչ հաստոցի կանոնները և հաստոցի խնամելը: Նախագգուչացման միջոցներն աշխատանքի ժամանակ:

Ունակութիւններ. — Իրերը հաստոցի սեղանի վրա դասավորել, ընտրել հարկաւոր դայլիկոնն ու փամփուշտին հաղցնել, հաստոցն աշխատանքի դնելը. արագութիւնը կանոնաւորել, հասոցը կանդնեցնել և դայլիկոնը հանել. հաստոցը յուզելն ու մաքրելը:

Պրակտիկ աշխատանք. — Մանկական աթոռ կամ սեղան պատրաստելը 3 ժամ:

ՀԵՆԳԵՐՈՐԴ ՇԱՖԱԹ. — 3-րդ և 4-րդ շար. ունակութիւններն ամրացնելը:

Պրակտիկ աշխատանք. — Ալպարտել աշխատանքը 3 ժ.:

ՎԵՅԵՐՈՐԴ ՇԱՖԱԹ. — Գարծիքները սրելը. խարտոց, սրոց քար, կրոր սրոց, յուղաքար: Նյութեր, վորոնցից վերջիններս պատրաստուած են: Սրելու պրոցեսը նրանցից յուրաքանչյուրի վրա: Սրելու շրջանի առաւելութիւնները: Գործիքներ սրելու կանոնները: Անվտանգութեան տեխնիկան:

Ունակութիւններ. — Սրել յերկարութեամբ սղոցող սղոցը (հաստոցի վրա): Ընթացիկ շակումներ շրջանաձև սղոցի, սղոցի, յուղաքարի վրա՝ դուրերի թելերի ոժանդակ սրման հարմարանքի միջոցով և առանց նրանց:

Պրակտիկ աշխատանք. — Դարակ 3 ժամ:

ՅՈԹԵՐՈՐԴ ՇԱՖԱԹ. — 3-րդ, 4-րդ և 5-րդ շար. ունակութիւնների ամրացումը: Պրակտիկ աշխատանքն աւարտելը 3 ժ.:

ՈՒԹԵՐՈՐԴ ՇԱՖԱԹ. — Յերկրորդ քառորդի աշխատանքների հաշվառքը և 1-ին կիսամյակի աշխատանքների հանրագումարը (2 ժամ):

ՄԵՏԱՂԱՄՇԱԿՈՒՄ

ԱՌԱՋԻՆ ՇԱՒԱԹ. — Մետաղներ, նրանց հատկութիւններն ու գործադրութիւնը: Սև և գունաւոր մետաղներ: Սև մետաղներէ տեսակները. յերկաթ, պողպատ, թուջ: Գունաւոր մետաղներէ հիմնական տեսակները. պղինձ, ցինկ, արծիճ, անագ: Հասկացողութիւն գունաւոր մետաղների ձուլմանը և նրանց գործադրութեան մասին:

Նշումներ. Մասշտաբային քանոն, գծիչ, քերիչ, կարկին և նրանց նշանակութիւնը: Նրանցով ոգտվելու կանոնները:

Ունակութիւններ. — Քանոնի, անկյունադրի, կարկինի, գծիչի և քերիչի միջոցով տեղերը նշանակել:

Մամլակներ. նրանց նշանակութիւնը, կառուցվածքի տեսակները: Նրանցով ոգտվելը և նրանց խնամելու կանոնները:

Ունակութիւններ. — Կաղմակերպել բանվորական տեղը և ճիշտ դասաւորել հարկաւոր գործիքները: Բանվորական գիրք 3 ժամ:

ՅԵՐԿՐՈՐԴ ՇԱՒԱԹ. — Մետաղահատում. — Մետաղահատման գործադրութիւնը: Մուրճեր, նրանց կառուցվածքը և նրանց ձևի ու կշիռի տարբերութիւնները, կախված նրանց նշանակութիւնից: Մետաղահատման ճիշտ յեղանակները: Նախադրուչացման միջոցները մետաղահատման ժամանակ:

Ունակութիւններ. — Կաղմակերպել բանվորական տեղը և ճիշտ դասաւորել գործիքները: Նյութերը սեղմել մամլակում: 3 մմ. հաստութիւն ունեցող շերտաւոր յերկաթը կտրել հատիչով մամլակի շուրթերի ուղղութիւնը: 1,6 մմ. հաստութիւն ունեցող յերկաթի շերտի կտրելն ըստ կանխորեն կատարած նշանակումների նարտոցով ոգտվելու կանոնները: Ավաղաթղթի մաքրիչի գործադրութիւնը: Բանվորական գիրք:

Պրակտիկ աշխատանք. — Պտուտակադարձի (հարթ) կամ վեշայկայի կարթ պատրաստելը 3 ժամ:

ՅԵՐԿՐՈՐԴ ՇԱՒԱԹ. — Առաջին և յերկրորդ շար. ունակութիւնների ամրացումը: 3 ժամ:

ՉՈՐՐՈՐԴ ՇԱՒԱԹ. — Պրակտիկ աշխատանք. — Կարթ հազուտի համար: 3 ժամ:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՇԱՒԱԹ. Սղոցելը. — Յերկաթի սղոցի կառուցվածքը և նրան խնամելը: Մկրատի կառուցվածքը: Մկրատի և սղոցով ճիշտ աշխատելու ձևերը: Նախադրուչացուցիչ միջոցներ աշխատանքի ժամանակ:

Ունակութիւններ. — Կաղմակերպել բանվորական տեղը: Մատերիալը մամլակների մէջ ամրացնելը: Կանոնաւոր հազոցելը

սղոցի ժայպակներ հաստացում: Գործիքը ճիշտ վերցնել և սղոցել մետաղյա սղոցով 10 մմ. հաստութիւն ունեցող շերտաւոր յերկաթը. մինչև 1 1/2 մմ. ունեցող ձողաւոր յերկաթը կտրելը սղոցով, մինչև կես մմ. հաստութիւն ունեցող մետաղյա թեղը մըկրատով:

Ծակելը և դամելը (հակադարձ դամ): Համեմատել մետաղի ծակիչ հաստոցը փայտամշակման ծակիչ հաստոցի հետ:

Կարողանալ ոգտվել հաստոցի դամելու ճիշտ ձևերից:

Պրակտիկ աշխատանք. — Յերկաթի սղոցի կամ դաշկայի շարի կամ յետոտանի դպրոցի լարորատոր յիսայի համար 3 ժամ:

ՎՅՅԵՐՈՐԴ ՇԱՒԱԹ. — Ծրար շար. ունակութիւնների ամրացումը և աշխատանքի շարունակութեան ամրապնդելը 3 ժ.:

ՅՈՒԹԵՐՈՐԴ ՇԱՒԱԹ. — Ծրարների ծրարումը: Արտաքին և ներքին ծրարներ, աջ և ձախ, նրանց գործադրումը. ամենատարածված ծրարների տեսակներն ու չափերը. ծակել ըստ ծրարի. մերմիկի և պրաշկաների կառուցվածքը:

Ունակութիւններ. — Ձևքի աշխատանքի միջոցով մեաշիկի ոգտութեամբ և դանադան պրաշկաներով կտրարել ծրարում 1/4 և 1/2 չափի:

ՅՈՒՅՄՈՒՆԻՔՆԵՐ ԳՅՈՒՂԱԿԱՆ ԹԵՐԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՆԵՐԻ 5, 6 և 7 ԳՍԱՐԱՆՆԵՐԻ ԾՐԱԳԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԲԱՇԽՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1934135 ուս. տարվա յերկրորդ քառորդի որացույցային բաշխումը կատարված է 1934 թ. ոգոսոս ամսվա փոփոխութիւնների հիման վրա:

Փայտամշակումը տարվում է միմիայն 5 և 6 դասարաններում, իսկ 7 դասարանում, բացառապես — մետաղամշակում: Աշխատանքի բոլոր այն տեսակները, վարոնք մտցված են որացուցային պլանի մէջ, կտրելի յե ըստ դպրոցի կարիքի կամ կոլխոզի աշխատանքների անհրաժեշտութեան (կամ ՄՏԿ) փոփոխել, գործադրելով բոլոր տեսական առաջադրութիւնները, ինչպես զիտելիքների ծախար, նույնպես և ունակութիւնները:

Յեթե սովորողների քանակը 25-ից շատ է, ապա արդյունաշեմ աշխատանքի համար անհրաժեշտ է տեսական մասն անցնել ամբողջ դասարանի հետ, իսկ պրակտիկ աշխատանքների համար դասարանը բաժանել յերկու խմբի:

ՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԾԵՓ

1934-35 ու. սարվա 2 րդ ֆառորդ ծրագրային նյութի բաշխումը ըստ շաբաթների

ԱՌԱՋԻՆ ԳԱՏԱՐԱՆ

ԱՌԱՋԻՆ ՇԱԲԱԹ. — Նկարչություն — Ապրիլիկացիոն աշխատանք — գունաավոր թղթերից ծաղիկներ կտրելն ու միազույն թղթի վրա փակցնելը (նկարչութիւն տեսարի մեջ)։ Ներկերի գույները (տոն) ճիշտ պորտոյումը։

Ծեփ. — Ծեփ կալից և դանազան նյութերից (տերևներ, ճյուղեր, ձողիկներ, մամուռ և այլն)։

Թեմա. — Թռչնաբուծարան (տնիկ, ծառեր, ցանկապատ թռչուններ, տուն և այլն)։ Ըստ յերեխաների պատկերացման։

ՅԵՐԿՐՈՐԴ ՇԱԲԱԹ. — Նկարչություն — Ստանկերի նկարելն ու գույն տալը։

Ծեփ. — Սունկերի ձեփումն ու ստվարաթղթի վրա ամրացնելը, զարդարելով նրանց մամուռով, տերևներով, այսինքն այլ միջավայրով, վորտեղ նրանք աճում ու սնվում են։

ՅԵՐԿՐՈՐԴ ՇԱԲԱԹ. — Նկարչություն — Նկարչութիւն ըստ պատմվածքի կամ ստանալորի։ Ստեղծագործական աշխատանք ըստ յերեխաների պատկերացման և յերեակալութիւն։

Ծեփ. — Տնային իրեր ձեփելը։

ՉՈՐՐՈՐԴ ՇԱԲԱԹ. — Նկարչություն — Թիթեռնիկներ նկարելն ու գունաավոր մատիտներով ներկելը։

Նկարչություն. — Ապրիլիկացիոն աշխատանք։ Գունաավոր թղթերից թիթեռնիկներ կտրելը։ Գիտելիքների ամրացումը։

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՇԱԲԱԹ. — Նկարչություն — Աղատ թեմա։ **Ձեռն.** Անհատական բնույթ կրող ստեղծագործական աշխատանք նկարչություն — Հայրիկը գնում է միթերքներ գնելու սայլով, ամանակով, երեքտարաբարչով, գնացքով, նախակով, յերե-

խաների պատկերացման ու հիշողութիւն համաձայն)։ Ստեղծագործական աշխատանք։

ՎԵՅԵՐՈՐԴ ՇԱԲԱԹ. — Նկարչություն — Աղատ թեմա։ Ստեղծագործական աշխատանք (դաշտ, ծառեր, արեգակ, սարեր և այլն)։ Յերեխաների ֆանտազիայի և յերեակալութիւն զարգացումը։

Նկարչություն. — Հիշողութիւնը անիվ նկարելը առանց կարկինի, ձեռքով։

ՅՈՒԹԵՐՈՐԴ ՇԱԲԱԹ. — Նկարչություն — Քտակուսիներ նկարելն առանց քանոնի սղնութիւն, պահպանելով կողմերի ճշտութիւնը (7 քտակուսի)։

Նկարչություն. — Ներկելով աշխատելը։ Ծանոթութիւն ներկերի և վրձինի գործածութիւն տեղնիկային։ 7 հիմնական գույներով (կարմիր, կապույտ, կանաչ, դեղին, սև, սպիտակ) վանդակը մաքուր թողնելով, շաքանակագոյն վանդակները ներկել, դուրս չգալով նրանց յեզրերից։

ՈՒԹԵՐՈՐԴ ՇԱԲԱԹ. — Բոլոր նախընթաց աշխատանքների վերանայումն ու քննարկումը։

Կիսամյակի նյութերի հանրագումարը տալը։

ՅԵՐԿՐՈՐԴ ԳՆԱՄԱՐԱՆ

71/2 ՇԱԲԱԹ — 15 ԺԱՍ — ՇԱԲԱԹԱԿԱՆ 2 ԺԱՍ

ԱՌԱՋԻՆ ՇԱԲԱԹ. — Նկարչություն — Աղատ թեմա։ Ստեղծագործական աշխատանք։ Մեր սենյակն ըստ յերեխաների պատկերացմանն ու հիշողութիւն։ Կարելի չէ նկարել սենյակում գրադարան առանձին առարկաներ։

Ծեփ. — Պարզ ձև ունեցող ստիտը ձեփելը։ Աշխատանք ըստ հիշողութիւն։ Կարելի չէ ցույց տալ ստիտըն ու թաղցնել։

ՅԵՐԿՐՈՐԴ ՇԱԲԱԹ. — Նկարչություն — Ստիտը նկարելն ըստ հիշողութիւն։

Ծեփ. — Ստեղծագործական աշխատանք։ Անասուններ և նրանց գոմը։ Աշխատանք արտադրութիւն համար ավելցուկ նյութերով (թուղթ, տերևներ, ձողիկներ, ճյուղեր, մամուռ և այլն)։

ՅԵՐԿՐՈՐԴ ՇԱԲԱԹ. — Նկարչություն — Բանջարեղենի նկարելն ըստ հիշողութիւն։

Ծեփ. — Բանջարեղենի ձեփվածք, պահպանելով չափերի հարաբերութիւնները։

ՉՈՐՐՈՐԴ ՇԱԲԱԹ. — Թմբուկ նկարելն ըստ հիշողութիւն։ Կարելի չէ ցույց տալ թմբուկը կամ նրա նկարը։

Ծեփ. — Սաղի կամ բաղի ձեփվածքն ըստ հիշողութիւն։

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՇԱԲԱԹ. — Նկարչութիւն: — Նկարչութիւն ըստ պատմիւմքի կամ վտանայութի: Ստեղծագործական աշխատար: Թեման պետք և լինի անցվելիք նյութից:

Նկարչութիւն — Սազի կամ բազի նկարելը:

ՎԵՅՅԵՐՈՐԴ ՇԱԲԱԹ. — Նկարչութիւն: — Ստեղծագործական աշխատանք: Պիտեբնեքը դնում են (թմբուկներով, դրոշակներով և այլն):

ՅԵՐՐՈՐԴ ԴՆՍՄԱՆ

7 1/2 ՇԱԲԱԹ — ՔԱՌՈՐԳՈՒՄ 4 ԺԱՄ

ԱՌԱՋԻՆ ՇԱԲԱԹ. — Նկարչութիւն: — Այդատ թեմա: Մենք ճաշում ենք: Ստեղծագործական աշխատանք:

ՅԵՐՐՈՐԴ ՇԱԲԱԹ. — Նկարչութիւն: — Բանդակած (նկար ներով) նկարելն ըստ յերեխաների հիշողութիւն և յերեակալութիւն: Կարելի չէ պարզ ձև ունեցող սափար ցույց տալ:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՇԱԲԱԹ. — Նկարչութիւն: — Նկարչութիւն ըստ պատմիւմքի կամ վտանայութի: Զրույցով և հարցերով ուղեկցվող ստեղծագործական աշխատանք:

ՅՈԹԵՐՈՐԴ ՇԱԲԱԹ. — Նկարչութիւն: Տարբա յեղանակը: Զմեռ: Ստեղծագործական աշխատանք:

ՉՈՐՐՈՐԴ ԳԱՍԱՐԱՆ

7 1/2 ՇԱԲԱԹ — ՔԱՌՈՐԳՈՒՄ 4 ԺԱՄ

ԱՌԱՋԻՆ ՇԱԲԱԹ. — Նկարչութիւն: — Հեռանկարի ուսումնասիրութիւնը: Փողոցի կամ յերկաթուղագծի նկարելը մտտիտով:

ՅԵՐՐՈՐԴ ՇԱԲԱԹ. — Նկարչութիւն: — Գունափոր ֆոնի վրա գունավող խորանարդի և ձևի նկարելը (բնականից):

Նկարը թերթի վեճարանում տեղափորել կարողանալ, ճշտութեամբ վերարտադրելով նրանց մեծութիւն և ձևի հարաբերութիւնները:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՇԱԲԱԹ. — Նկարչութիւն: — Լուցիլու բացած (փռած) տուփը նկարելը բնականից: Յուրաքանչյուր սեղանի վրա մի տուփ կա:

ՅԻՆԳԵՐՈՐԴ ԳԱՍԱՐԱՆ

7 1/2 ՇԱԲԱԹ — 8 ԴԱՍ — ՇԱԲԱԹԸ 1 ԴԱՍ

ԱՌԱՋԻՆ ՇԱԲԱԹ. — Նկարչութիւն: — Բնական և աշխատանքին գունափորում ունեցող տերևներ նկարելը բնականից:

Պարզ ձև ունեցող յերկու տերև:

Գունափորման ճիշտ վերարտադրումը:

ՅԵՐԿՐՈՐԴ ՇԱԲԱԹ. — Հեռանկարի ուսումնասիրութիւնը: Նկարել յերկաթուղագիծ կամ հեռագրատուներով ճանապարհ և հեռանկարում հեռացող ուրիշ առարկաներ:

ՅԵՐՐՈՐԴ ՇԱԲԱԹ. — Տուփի վրա կողքին կանգնեցրած խորանարդի նկարելը:

ՉՈՐՐՈՐԴ ՇԱԲԱԹ. — Զուգահեռանիմտի վրա դրած կոնի նկարելը: Յերկուան էլ ուղղահայաց կամ թեք դիրքով:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՇԱԲԱԹ. — Մտնածի տեսք ունեցող պլակատի համար յոլոնեղ դրելը: Թեման՝ կոլլոտոլ:

ՎԵՅՅԵՐՈՐԴ ՇԱԲԱԹ. — Նույնը:

ՅՈԹԵՐՈՐԴ ՇԱԲԱԹ. — Սեղան նկարելը (բնականից):

ՈՒԹԵՐՈՐԴ ՇԱԲԱԹ. — Կիսամշակում մշակած նյութի հանրագումարը տալ: Աշխատանքների վերանայումն ու քննարկումը:

ՎԵՅՅԵՐՈՐԴ ԳԱՍԱՐԱՆ

7 1/2 ՇԱԲԱԹ — 8 ԴԱՍ — ՇԱԲԱԹԸ 1 ԴԱՍ

ԱՌԱՋԻՆ ՇԱԲԱԹ. — Ողակ (տբուլ): Մունտայլիկացիա, այլինքն՝ նրան նկարելը մի քանի դիրքերում (չրջելով նրան): Լույս ու տուփը տարր: Աշխատանքը դրաֆիկական և մատիտով:

ՅԵՐԿՐՈՐԴ ՇԱԲԱԹ. — Նույնը:

ՅԵՐՐՈՐԴ ՇԱԲԱԹ. — Հեռանկար: Թեման և՛ փողոցը կամ յերկաթուղագիծը (նկարել ներկերով):

ՉՈՐՐՈՐԴ ՇԱԲԱԹ. — Նույնը:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՇԱԲԱԹ. — Պարզի տերևի կամ ըստ ձևի նրա նման ալլ տերև նկարելը (բնականից): Ճիշտ կոնտուրը և պարզ յերեացող յերակները:

ՎԵՅՅԵՐՈՐԴ ՇԱԲԱԹ. — Նույնը նկարել աշխատանքին գունափորմամբ (նկարել բնականից):

ՅՈԹԵՐՈՐԴ ՇԱԲԱԹ. — Զրույց: Թեթև ծանոթութիւն արվեստի պատմութիւն: Արվեստի սագմերը նախնական հասարակութիւն մեջ: Յեղիարտուի արվեստը: Այն եպոխայի պահանջները: Զրույցը տանել պատմիւմքի ձևով:

ՈՒԹԵՐՈՐԴ ԾԱԲԱԹ. — Կիսամյակում մշակած նյութի հանրագումար տալը: Աշխատանքների վերանայումն ու քննարկումը:

ՅՈՒԹԵՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

7 1/2 ԾԱԲԱԹ — 8 ԴԱՍ — ԾԱԲԱԹԸ 1 ԴԱՍ

ԱՌԱՋԻՆ ԾԱԲԱԹ. — Գլխարկ: Նկարել բնականից: Մի դասում վերջացնել: Արագ աշխատելու ունակութիւններ, առանց վնաս հասցնելու ստաբիլաներ վերարտադրելու տեխնիկային:

ՅԵՐԿՐՈՐԴ ԾԱԲԱԹ. — Մեջքը դեպի դասարանը կանգնած յերեխաների ուրվագիծը: Պարզ ու բնորոշ դժերով, առանց մանրամասնութիւնների: 2-3 յերեխաների առանձին-առանձին գծագրումը: Արագ աշխատելու ունակութիւններ, ուշադրութիւն դարձնելով գլխաւորի վրա, այսինքն՝ համեմատութեան և դրութեան վրա:

ՅԵՐՐՈՐԴ ԾԱԲԱԹ. — Հասկացողութիւն կերպարվեստի հիմնական տեսակների մասին: Ճարտարապետութիւն, կենդանագրութիւն, քանդակագործութիւն (ժիւլյոպիս), պոլիգրաֆիկա: Առանձին դունավոր նկարների (գրքերում և հանրապիտան կան բառարաններում), պլակատների, դիտարկութեան ցուցադրելը:

ՉՈՐՐՈՐԴ ԾԱԲԱԹ. — Կտորի ֆոնի վրա թեք դրութեամբ դրված սափոր նկարելը (բնականից): Սափորն ըստ ձևի պետք է մի քիչ բարդ լինի նախընթացից:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԾԱԲԱԹ. — Նույնը:

ՎՅՑԵՐՈՐԴ ԾԱԲԱԹ. — Հարակիցել սրնամենտը, համաձայն աշակերտների պատկերացման: Աշխատանքն անհատակ է, ստեղծագործական:

ՅՈՒԹԵՐՈՐԴ ԾԱԲԱԹ. — Նույնը ներկերով:

ՈՒԹԵՐՈՐԴ ԾԱԲԱԹ. — Կիսամյակում անցած նյութի հանրագումարը տալ: Աշխատանքների վերանայումն ու քննարկումը:

ՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ

ՄԻ ԴԱՍԻ ԿՈՆՍՊԵԿՏ

ՅԵՐԿՐՈՐԴ ԴԱՍԱՐԱՆ

Փեմա՝ մեր սենյակը:
Ազատ նկարչութիւն:
Դասի նպատակը — Յերեխաների ստեղծագործական ընդունակութիւնների դարգացումը:

Դասի պլանը — 1. Ընդհանուր սկզբնական գրույցներ:
2. Նկարչութիւն, միաժամանակ ուսուցչի անհատական գրույցներ:

3. Կոլեկտիվ վերանայում:
Ժամանակ — մեկ ժամ:
Պարագաներ՝ տեսք, մատիտ, ռետին, ներկեր կամ գունավոր մատիտներ և վրձին:

Դասի ընթացքը. — Ուսուցիչը հարցնում է յերեխաներից՝ ի՞նչ կա իրենց սենյակում (ինչ առարկաներ): Ընտանիքը քանի՞ հոգուց է բաղկացած: Ինչո՞վ են դբաղվում հայրիկը, մայրիկը և ուրիշները: Ի՞նչ կենսամիներ են սպրում իրենց սենյակում: Դրա նից հետո առաջարկում է յերեխաներին ըստ ցանկութեան նկարել, ինչ վոր ուզում են: Որինակ՝ սրորոցում գտնվող յեղորրը կամ քրոջը մայրիկն սրորում է: Հայրիկը մոտնամաներ է նորո գում: Կատունը իր ձագերի հետ մտել է զամբյուղը: Ճաշը պատրաստ է և այլն: Յերեխաները կարող են ընտրել առանձին առարկաներ (կահ կարասի, ախտ, կենդանիներ և այլն): Ձրուցը տեսում է մոտավորապես 5-րուպե: Նկարելու ժամանակ ուսուցիչը չըջում է և նկարել զժվարացողներին գլխի գցող հարցերով ծանր դրութիւնից հանում է: Յեթե յերեխան տվյալ թեմայից բարբոս վին նկարել չի կարող, նրան պետք է թեմայի բնորոշութեան ապարեզում աղատ թողնել: Ուսուցիչը յերեխաների աշխատանքների վրա ուղղումներ չի մտցնում, միայն դիտում և խորհուրդներով ոգնում է: Նկարելու ցանկութիւնը չխափանելու նկատառու

մով, յերեխաների աշխատանքները չի քննադատում: Դատը վերջանալուց 10 րոպե անաջ պետք է համարել մի քանի լավ կտոր քաժ աշխատանք և ցուցադրել դասարանի առաջ: Ընդգծվում է մոզ թե կատարելու տեխնիկան, այլ Փանտաղիան, յերեխաների յերեակալութունը: Որինակ՝ ուսուցիչն ասում է. «Այ, տեսք, Գրիգորյանը ամէլ է տանն իր կյանքի ամբողջ պատկերը: Նրա մայրը չվացք է անում, հայրը պարան է դործում, յեղբայրը շար կերակրում է, սեղանի վրա դրած կա սափոր, հաց և այլն»: Թույլ յերեխաների աշխատանքը չի ծաղրվում, այլ ատվում է, թե յերեխան իր նկարին ինչ կարող եր ավելացնել:

Առաջադրություն տան համար

Ընտրել իրեն հետաքրքրող թեման և նկարել ներկերով կամ գունափոր մատիտներով:

ՄԻ ԴԱՍԻ ԿՈՆՍՊԵԿՏ
ՎԵՅԵՐՈՂԴ ԴԱՍԱՐԱՆ

Թեմա. — Ողակներ: Մուլտիպլիկացիոն աշխատանք:
Դասի նպատակը: Առարկան մի քանի տարբեր դեպքերում՝ ուղղաձիգ, հորիզոնական, թեք, սովորեցնել քննարկել: Տալ դրա ֆիկտիոն գրագետ և պարզ կտրված նկար:

- Դասի պլանը. — 1. Ողակն ուղղաձիգ դեպքում ամբացնել:
2. Նկարել:
3. Բեռը նոր դեքում ամբացնել:
4. Նկարել:

Ժամանակ — 2 ժամ:
Դասի ընթացքը. — Նմուշը կանգնեցնել ուղղաձիգ դիրքում: Բարձրության նշումը թերթի վրա, ատուղելով այն՝ մատիար բռնած, ձեռքը մեկնելու յեղանակով (աչքաչափ): Շարունակ րոտուղել յերկարության և յայնության հարաբերությունը: Փութ կոտությամբ կատարած նկարից հետո սովերք տանել շտրիխների միջոցով: Պատկերացնել ընկնող սովերք (յեթե նա յերևում է): Արդբանից հետո ողակը շրջել, թեքել և մորեն իրի վրա հանել:

Նկարել հորիզոնական դիրքում, նախ աչքի բարձրությունից ցածր, հետո աչքի բարձրությունից բարձր և աչքի բարձրության վրա: Ամեն անգամ սովերափոր կողմերը շտրիխափորել: Աշխատանքի պրոցեսում ուսուցիչը շրջում և տայիս է ցուցմունքներ, առանց մատիտով ուղղումներ կատարելու:

Առաջադրություն տան համար

Նկարել սափան՝ յերկու տարբեր դիրքերում (քնականից) և տալ սովերք, շտրիխափորելով աչք:





Խմբագիր—Չ. Գ. Փամկոչյան
 Տեխ. խմբ. Կ. Քառյանյան



Հրատարակող—Գրականության հաստիքապետություն
 Մասնաճյուղ № 7872 Յանվարի 1999 թ. (տպագրված է 100 օրինակով) Պր. 111 ինտերնացիոնալ
 Բակոպոլիգրաֆա ԲՄՊ Երևանի քաղաքում Սարգսյան-Եփիմովա 29

ՀՀ Ազգային գրադարան

NL0239133

53681

4111 2 II

НКП — АССР

Управление начальной и средней школы.

**Программно-методические материалы
к учительским конференциям**

Баку

1934
